

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻՅ

ՓՈՒՍԿՈՅՎԼ ԲՎՈՒՐ

ԹՈՒՐԹԵՐԵՆԻ ԲՎՐԲՎՈՆԵՐՈՒՄ

*TÜRK DIALEKTLERİNDE  
ERMENİCEDEN  
ALINMIŞ SÖZLER*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ, ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիրքը նվիրվում է Հրանտ Դինկի անմահ հիշատակին

**ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Գիրքը տպագրվում է «Գուրգեն Մելիքյանի» Քաշաբաղի  
բազմազգակ ընտանիքների հիմնադրամի» հոգածությամբ



ԱՍՈՂԻԿ

«Ասողիկ» հրատարակչություն

Երևան 2007

4160

ՀՏԿ 809.198.1:809.435  
ՊՄԻ 81.2:7+81.2 Թուրք  
Մ 806

Տպագրվում է ՀՀ ՊԱՍ Արևելագիտության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ քանասիրական գիտ. բեկնածու,  
դոցենտ **Լուսինե Մուրեմի Սահակյան**

**Սկրոյչյան Ե.Ա.**

Մ 806 «Հայերենից փոխառություններ թուրքերենի բաղբառներում» - Եր.:  
Աստղիկ, 2007 - 318 էջ:

Գիրքը նվիրված է թուրքերենի բաղբառներում գործածվող հայերեն կամ հայերենի  
միջնորդությամբ փոխանցված բառապաշարի քննարկումը: Թուրքերենի բաղբառների  
բառապաշարի համար հիմք են ծառայել 12 հատորանոց Derleme Sözlüğü (DS), Büyük Argo  
Sözlüğü, (BAS), այլ ազգագրական և առանձին բաղբառների նվիրված գրքեր, իսկ հայերեն  
կողմի համար «Հայերեն Արձատական Բառարանը» (ՀԱԲ), «Գուստական Բառարանը» (ԳԲ),  
«Հայոց թառ ու բանը» (ՀԲԲ), և «Հայերեն լեզվի բաղբառային բառարանը» (ՀԼԲԲ):

Գիրքը կարող է օգտակար լինել ինչպես ընդհանուր լեզվաբանության, ազգագրու-  
թյան, այլև մասնավորապես հայերենի և թուրքերենի բաղբառներով զբաղվողների համար:

Մ 460200000 2007թ. ՊՄԻ 81.2:7+81.2 Թուրք  
0136 (01)-2007

ISBN 978-9939-50-001-1

© Սկրոյչյան Ե.Ա., 2007 թ.

**ՀԱՅԵՐԵՆԻՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹՈՒՐԵՐԵՆԻՆ ԸՆԾԱԾ ԲԱՌԵՐԻ  
ՄԱՍԻՆ  
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

Թուրքերենին (օսմաներենին) հայերենից անցած բառերի  
մասին առաջին հիշատակողներից մեկն էր XVII դարի պատմաբան-  
ճանապարհորդ Էվլիյա Չելեբին, որը ճանապարհորդել է  
Մոլդովայից մինչև Պարսկաստան և երեք տասնյակից ավելի  
հայերեն բառեր է արձանագրել իր ուղևորությունների ընթացքում.  
սհա այդ բառերը՝ քաղված Ռ. Դանկոֆի «Չելեբիի բառարանը»  
(Çelebi, Glossary) գրքից՝ հրատարակված Հարվարդի  
համալսարանի կողմից 1991թ. keran<գերան (41), kukuzik<կկուզ  
(107), tihtab<ղեղթափ (91), turgaz<ղոզոց (91), tel<թել (90), il<իլ  
(86-88), lambak<լամբակ (108) Laran<լարան (108), Lakot i hem-lak  
(107), Loğ taşı<լողթար (107), hirnikollt<կլիկնքոտ (108), hopan  
kandiz<խտպան քանդել (107), çap<ծափ, sen çalar, sen çap (107),  
kurkut< կրկիտ (107), kaparı<կապանք (48), koçurkan<կոչնական  
(108), kovlek, külek<կովակ (51), kişdon<քրիստոնյա (50),  
hatik<հատիկ (107), cağ<ճաղ (20), mığdisi<մախեսի (57),  
nahır<նախիր (80), şenlik<շենիկ (86), şirik<(86), çermik<ջերմուկ  
(27), çorlu<չորուի (28), çärten<ջրիորդան (28), pastik<պաստեղ (65),  
poşı<փուշի (67-68), poçık, poçi, pioçur, pöçük<պոչիկ (67-68), andıra  
halası<անտեր մնա (12), derder<տըրտըր (31), kırman<քարման  
(106), kohik<քողիկ (86-88), şit<շիտ և այլն:

Չելեբի Էվլիյայի բերած բառերից մի քանիսը, ըստ  
երևութից, աղավաղված են՝ cillur, cahcahun, kohik, şittik, şihpik և  
այլն (տես ALT, էջ 9):

XIXդ. երկրորդ կեսից և XXդ. սկզբին քաղմաքիվ  
թուրքագետներ, ինչպես Ա.Չ. Բուդագովը (1869-1871,  
Сравнительный словарь турецко-татарских наречий, т. I-II,  
СПб), Զ. Պատկանովը (О месте, занимаемом армянским языком в

крупы и соловопорошковых (ИКОИРГО, 1879-1881, S. VI), Վ.Ա. Գորդլևսկին, 1911-1920-ական թթ., ապա՝ Սևորդյանը և այլք, նշում են հայերենից անցած բառերի մասին թուրքերենում:

Հայերեն լեզվից թուրքերեն խոսակցական լեզվին անցած (փոխառյալ) բառերի վերաբերյալ հայ մամուլում հետաքրքրություն սկսվեց XIX դ. կեսերին, երբ սկսվեցին հարևան թուրքերի կամ թրքախոս հայերի լեզվում գործածվող հայերեն բառերի մասին վկայություններ տպագրվել: XIX դարի իննսունական թվականներին Հ. Աճառյանը կոչից հետո «Քիւրական» հանդեսում (1898թ. էջ 385-386) սկսեցին հրատարակվել բառացանկեր ժողովրդախոսակցական թուրքերենում գործածվող հայերեն բառերի մասին (Քիւրական, 1898, էջ 387, 626-627, 1899, էջ 116, 314, Յուշարձան, 1911, էջ 328, 330, Հայաստան, 1917, թիվ 90, Ծաղիկ, Արևելք և այլն): Մնում էր հիմնավորել. արդյո՞ք դրանք մի երրորդ աղբյուրից էին գալիս (պարսկերենից, զնչուերենից, արաբերենից, հունարենից, քրդերենից կամ կովկասյան լեզուներից ու ասորերենից), թե՞ հայերենից կամ հայերենի միջնորդությամբ էին անցել թուրքերենին:

Հ. Աճառյանն սկսեց որոնել այդ ընդհանուր բառերը նաև այթայան լեզվախմբում: Թուրքերենի հետ ընդհանուր բառերի բացակայությունը մյուս թուրքական լեզուներում իսկապես հիմքեր էին տալիս դրանց հայերենից կամ հայերենի միջնորդությամբ թուրքերենին փոխանցվելու համար:

Իսկ այս հարցը պարզելը կարևոր էր նաև այն տեսանկյունից, որ թուրքերենը մինչև եվրոպա տարածված լինելու հանգամանքով, հայերենից վերցրած բառերի համար կարող էր դառնալ փոխանցող օղակ եվրոպական լեզուներից:

Հ. Աճառյանը նախորդների և իրեն իսկ հավաքած նյութերի հետ միասին, հրատարակեց նախ 1913թ. «Գավառական բառարանում», ապա՝ «Հայերեն արձատական բառարանում» (1932-1936թթ.) շուրջ 230 հայերենից թուրքերենի խոսակցական լեզվին անցած բառեր:

Հայերենից թուրքերենի բարբառներին անցած բառերը բնականաբար քանակով ավելի շատ էին, քան թուրքերենի գրական լեզվին անցած փոխառությունները, ուր օտարաձուտ բառերի նկատմամբ լեզվաբանների հատուկ հսկողությունը կա:

Հայ լեզվաբան Հ. Գազանջյանը, 1911թ., անկախ Յոն Կրայելիչից, հրատարակեց իր «Հայերեն փոխառյալ բառեր թուրքերենի մեջ» հոդվածը (Յուշարձան, Վիեննա 1911թ., 325-330):

Ն. Կրայելիչ Գրաֆենհորստը 1911թ. «Հանդես անսօրեայ» հանդեսում (N 25, 257-267) հրատարակեց «Հայերեն փոխառյալ բառեր թուրքերենում» հոդվածը: Այնուհետև շատերն են նշում մի շարք հայերեն բառերի զոյության մասին թուրքերեն խոսակցական լեզվում, բայց դեռևս գիտակարգված ուսումնասիրություններ չեն արվում, օրինակ, Սևորդյանը քիիվե բառը կարծում է, որ հայերեն քալոր բառից է առաջացել: Քիիվեն մուսուլմանների կյանքում (կենցաղում) շատ հարգալից և կարևոր մի անձնավորություն էր, որը ներկա էր լինում երեխայի թլպատման արարողությանը և մոգական մի շարք ծեսեր էր կատարում երեխայի վրա: Այնուհետև ամբողջական կյանքում պիտի խնամարկեր նրան, նույնիսկ մինչև խոր ծերություն: (Սևորդյան, Հ., էջ 125, 519, 68, 476, 25, A – Nesin, Böyle gelmiş, böyle gitmez, İstanbul, 1966, 15, 25: Гордлаевская В.А., էջ 25 ժ.ժ. Еремеес //Յ. Ծ, 321, Памканов К., Пәңсар, түр, петек, җән /էջ 25, 46/, Бүләков И., ар.стак /I, 25/, Коҗай, җ.Ә. nahır, nahırçı):

Իր գրքում արևելյան Անատոլիայի մի շարք շրջաններում տարածված հայերեն բառերի մասին է խոսում Սարաջօղլուն՝ բերելով մի շարք հայերեն բառեր, ինչպես օրնը, փարախը կոչվում է ցոր, անասնապահների ազարակը՝ կալատախտակը՝ kam, 6-12 եզներ լծված գութանը՝ kotan, հարսը՝ herk և այլն (H. Saraçoğlu, doğu Anadolu, 1956, İstanbul 266, 239, 436, 445, 468): Առաջիններից մեկն էր նաև Ա. Ջ. Շաֆերօղլուն, որը 1951թ. հրատարակեց «Անադոլուի գավառներից բերանացի

աղվածքներ» (Istanbul, 1951 Caferoğlu, Alacam/ Bolu/Elekçileri  
İliline ait bâzi kelimeler /2, 14-216):

Ահա նրա հրատարակած բառերի ցուցակը.

1 աշղևի açğıt այթ  
2 ախպար ahbar եղբայր  
3 ախլըթ ahçık աղջիկ  
4 արգոր argor ալոայ  
5 անիկ anik անիկա  
6 արի arı առի (առնել)  
7 արիզա arıga հայրիկ  
8 այայ ayay աւել  
9 ծուր çur ծուր  
10 չըքա çuka չկա(յ)  
11 չորս çors չորս  
12 դախտաք dahdak տախտակ  
13 դասսը dassı տասն  
14 դըղ diğ տեղ  
15 գեղին gedin գետին  
16 tu es tu  
17 tı eş tı  
18 qaw ga կայ  
19 գինիկ ginik կին/կնիկ  
21 գեղին gedin գետին  
22 օրգաթ orgat երկ(ու) հաստ  
23 օսգի osgi ոսկի  
24 օսթ otk ոսթ  
25 փեր per բեր/ել  
26 քալե kale քայլել (քայլիր)

22 գըրակ gırak կրակ  
23 գուդոր gudor կտոր  
24 հաղնա hağna խաղալ  
25 համմարիկ hammarik համար  
26 հագնելիք haknelik  
ազանելիք  
27 հատս hats հաց  
28 խամդաք handak հանդ  
աղանկ  
29 խարի hari ծի  
30 խաս has հաս  
31 խըմելիք hımelik խմելիք  
32 իրեք irek երեք  
33 մարիզա marıga մայրիկ  
34 մարթ mart մարդ  
35 մաթ mat մատ  
36 մաթը matsı մազ  
37 միս mis միս  
38 մուրուր murur մրուր  
39 մուշակ muşak մշակ  
41 նիստ nist նիստ  
42 շուն şun շուն  
43 թուն tun դու(ն)  
44 զարթ zark ձեռք  
45 զեխալի zehali ծախել  
46 զեխասի zehasi ծախեցի

47 քընա kına գնալ/  
48 քըբան kıtan կրան  
49 քուքանիթ kukanit  
50 քուքան քոր  
51 քուքի kuti քիթ  
52 շարիկ sabik շապիկ  
53 թուլթ tuğt թուլթ

59 զի zi ծի  
60 խենըչի henici խնոցի  
61 գեռոզ geroç կեռոջ  
62 գազաթ gağat

Զգալի բվով հայերեն բառեր ենք գտնում նաև 8 հատորանոց Tarama Sözlüğü բառարանում (Մանրակրկիտ բառարան), ուր բառեր են բացատրված թուրքերենի ձեռագրերում XIII-XVII դդ. գործածված բառերից: Դրանց մի մասը պարսկերեն փոխառություններ են, մյուս մասը՝ արաբերեն, մասամբ էլ հայերեն.: Բառարանը հրատարակվել է 1966-1977թթ. Անկարայում:

Հայերեն բառեր են գործածվում նույնիսկ թուրքական էպոսում՝ «Դեղե Զորքուբուն»՝ օր. թագավոր, ազնավոր, սուր և այլն (ռուս հրատ. Кнуга моего деда Коркыма, М. - А., 1962, էջ. 73, 87, 95, 96), որը համարվում է XIV դարի ստեղծագործություն: 1950-ական թվականներից սկսած Ա. Թիթբեն հողվածներ է հրատարակում թուրքերենի բառապաշարում գտնվող հարևան լեզուներից կատարված փոխառությունների մասին, հունարեն բառերի մասին (1955թ.), սլավոնականների մասին (1957թ.), պարսկերենի մասին (1962թ.), արաբերենի մասին (1958թ.) և հատկապես «Կարսի գավառի արիեստավորական բառապաշարի մասին» հողվածը՝ հրատարակված «Բալկանագիտություն» հանդեսում (1982թ.), ուր բերված են ժողովրդական թուրքերենում գործածվող 30-ից ավելի հայերեն բառեր. \* ազիլ-եօօի, eyis (67), անկան(ակ)-engenek (70), բակ-բեօե, beye (14), բաղարթ-բաօաչ (207), բուլն-pın (211), բունկալ-pingel (212), գերան-keren (151), գերանդի-kerenti (152), գոմ-kon (159), գուքան-kotan (161), գուռն-kürün (171), թեշ-teç (247), թառ-tar (245), թել-tel (248), խաչերկաթ-

hatircək (122), խոփ-hop (132), խուրջն-huncun (137), կամն-gem (91), կապ-gab (77), կեմ-kem (150), կոր/կոփ-gop (104), կոնդ-gond (103), ճաղ-cağ (23), մարագ-merek (192), մարդակ-meretek (193), շատարար-şadara (236), շատ-şurat (237), սամի-sami (221), սալ-sel arabası (229), տափան-tapan (244), ցախաւել-sağğayul (217) և այլն:

Բազմաթիվ հայերեն բառեր են նշվում այնուհետև թուրք լեզվաբանների, ազգագրագետների, բանահավաքների երկերում, որոնցից օգտվել է Ռ. Դանկոֆը իր գրքում: 1977թ. Յ. Գայայանը հրատարակեց «Գորգագործության մեջ կիրառվող փոխառյալ բառեր թուրքերենում» հոդվածը, որտեղ նշում է 15-ից ավելի փոխառություններ, դրանք են՝ tel, hav, haç, keten, ....., ....., argaç, vargei, dorun, azap, teşi, him, tert, tav çap ðmek, pefek և այլն. (Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, N 8, էջ 85-89):

Թեև Բազմաթիվ հայերեն բառեր զրանցվել են թուրքերենի բառարաններում, բայց հաճախ առանց նշելու այդ բառերի հայկական ծագումը: Գրական թուրքերենի բառարաններում նշվող հայերեն բառերի թիվը 50-60-ից չի անցնում, մինչդեռ դրանք շատ ավելին են: Իսկ թուրքերենի բարբառներում 1500-ից անցնում է: Փարս Թուրազըն Okyanus Ansiklopedik Türkçe Sözlük, 2 basım (2-րդ հրատարակության) մեջ ընդամենը 39 բառերի դիմաց է նշում նրանց հայերեն լինելը: Իսկ «Ծաղկաքաղ հայ գրականության» (Ermeni Edebiyatından Seçkiler) գրքում, էջ 32-38 նշում է արդեն 192 հայերենից թուրքերի կատարած փոխառություններ: Սակայն այս թիվը շատ է պակասավոր, որովհետև հաշվի չեն առնված թուրքերենի բարբառներում գործածվող հայերեն փոխառությունները:

1990թ. Istanbul-ում լույս տեսավ Būyūk Argo Sözlüğü՝ մեծ ծածկալեզվի բառարանը, ուր մի քանի տասնյակ հայերեն բառեր կան: Ֆ. Դեելլուլուն մի քանի անգամ՝ հրատարակեց իր «Թուրքական ծածկալեզուն» /Argo/, 1990թ-ին՝ յոթերորդ

հրատարակությունը եղավ, ուր նույնպես շուրջ 70 հայերեն բառեր կան նշված:

Թուրքերենի բարբառներից գրական լեզվին անցած հայերեն բառերի քանակը մինչև վերջ չի ուսումնասիրված: Այս բացը լրացնելու նպատակով Խ. Ամիրյանը ձեռնամուխ եղավ 1980-1990-ական թվականներին թուրքերեն գեղարվեստական գրքերից հայերեն բառերը դուրս գրելու գործին՝ հրատարակելով 1980թ-ին մի ընդարձակ հոդված, «Հայերենից փոխառյալ բառեր ժամանակակից թուրքերենում» (Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, N 4, էջ 81-87, Երևան) 1985թ., «Հայերենից փոխառյալ բառերը արդի թուրքերենում» վերնագրով («Մեծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուում, հ. XVII, էջ 143-164), ապա՝ որոշ փոփոխություններով որպես գիրք հրատարակվեց այն Երևանում 1996թ.:

Եվս երկու ընդարձակ ուսումնասիրություններ լույս ընծայեց հուլանդացի թուրքագետ Ուվե Բլեզինգը (1992թ. «Հայերենի բառապաշարը Թուրքիայի թուրքերենում Համշենի բարբառի օրինակով» (Ամստերդամ, Ռոդոպի, 1992թ.) և 1995թ. «Հայերեն-թուրքերեն ստուգաբանական դիտողություններ, մասնավորապես հայերենի Համշինի բարբառին վերաբերող դիտողություններով հանդերձ»), որոնց նշանակությունը ավելի մեծ է, քան թույլ են տալիս ենթադրել գրքերի վերնագրերը: Ուսումնասիրությունները կատարված են պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, թուրքերենի և հայերենի քաջ իմացությամբ: Ուսումնասիրությունները ունեն կրկնակի գիտական արժեք, քան որ ծառայելու են և՛ ի նպաստ հայագիտության, և՛ ի նպաստ թուրքագիտության: Ինչպես հայտնի է, թուրքագետները այնքան էլ ոգևորված չեն թուրքերենի և թուրք մշակույթի վրա հայկական ազդեցությունը բացահայտելու տեսանկյունից: Ընդհակառակը, աշխատում են լռել այդ մասին կամ հնարավորինս սքողել այն: Ու. Բլեզինգի գրքերը (ինչպես նաև այս խնդրով զբաղվող մյուս հեղինակների գործերը) ունեն նաև քաղաքական հնչեղություն, քեև

նրանց նպատակը գիտականն է: Քանի որ Թուրքիան, գործելով աշխարհում ամենազարեկի ցեղասպանություններից մեկը, առ այսօր՝ 90 տարի անց, քաջություն չի գտնում 2 միլիոն հայերի ոչնչացումը խոստովանելու համար և ընդհակառակն է պնդում: Եվ ահա մե՜սն ուսումնասիրությունները այս առումով ունեն նաև քաղաքական նշանակություն, քանի որ ապացուցում են ուրացողներին թուրքերենում անցնելի հետքեր թողած մեծ մշակույթ ունեցող մի ժողովրդի բերած նպաստը թուրքերենին, ինչը ոչ մի կերպ հերքել հնարավոր չէ:

Թուրքիայի տիրող պետական ապարատի հայերի և Ֆայկական հարցի հետ կապված ամեն ինչի նկատմամբ ցուցաբերվող նիհիլիստական մոտեցման և պատմության կեղծաբարության համար (իսկ պատմությունից հետո ավելի շատ բռնաբարվում է լեզվաբանությունը), Ուլվե Բլեզինգը կեղծ լեզվաբաններ է անվանում այն թուրք հեղինակներին, որոնք իրենց ստեղծագործություններով ոչ թե գիտությանը, այլ կառավարող շրջանակներին են ցանկանում ծառայել՝ զրի բերելով ճշմարտությունը. շրջանցում են նրանց հայերենի հետ կապված ազդեցությունները, բառարաններում չեն տրվում ակնհայտ հայերեն ծագում ունեցող բառերի դիմաց ծանոթագրություններ և այլն: Իրավացիորեն քննադատում է Ա. Թիթցեին «Օտար տարրեր օսմաներն թուրքերենում (1991թ.)», Գ. Չագափին «Չամառոտ ներածություն թուրքերեն լեզուների ուսումնասիրության (1978թ.)»: Այս իսկ առումով էլ հիմնականում թուրքերենի բառազանձում հայերեն բառերի գոյության մասին աշխատությունները հիմնականում պատկանում են օտար լեզվաբանների: Իրավացիորեն Բլեզինգը նշում է մի շարք օտար լեզվաբանների ուսումնասիրություններ՝ ընդգծելով հատկապես լեհ Անդրեյ Պիտվիչի (1989թ.) ծառայությունը «Չայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում», որից հետո միանգամից այս ասպարեզում մեծանում է հայերենի նկատմամբ եղած հետաքրքրությունը: Նույնիսկ արդեն օտար հեղինակների կողքին

տեսնում ենք թուրք լեզվաբանների, որոնք ուսումնասիրում են հատկապես Թուրքիայի արևելյան շրջանների բարբառները:

Ու. Բլեզինգի հրապարակած 272 բառերից 21-ը տեղանուններ են՝ հայերեն բառերի միջոցով կազմված, որոնք եթե հասկանալի լինեին թուրք ազգայնականներին, ապա դրանք ևս քարտեզի վրայից անհետացած կլինեին՝ որպես հայերի ուսման հետքերը հիշեցնող հուշարձաններ. այդ իսկ առումով էլ դրանք նույնքան արժեքավոր մասն են կազմում գրքի, որքան մյուս ստուգաբանությունները:

Ընդգծենք այն փաստը, որ նրա քննած Չամչենի բարբառից թուրքերենին անցած այդ 250-ից ավելի բառերի մոտ յոթ տասնյակը գոյություն չունի Գ. Աճառյանի «Քննություն Չամչենի բարբառի» ուսումնասիրության մեջ, որով հեղինակն իր մեծ նպաստն է բերում նաև հայ բարբառագիտությանը՝ լրացնելով հայ մեծ լեզվաբանի գործը նորահայտ բառերով, որոնք փրկվում է անդարձ մոռացությունից: Նշենք դրանցից կարևորները՝ տոթ, տիգ, տնագ, կողպեք, մշուշ, նախիր, գդալնոց, ակոս, ողվանք, հորթով, գոգնոց, քոթոթ, լակաման, բոռ, չվան, կթոլ, բնակալ, սանդոթ, խաչիլ, խլուրդ, թացան, խուխ, խուրծ, տափիչ, թնել, թաքման և այլն: Այս բառերը Բլեզինգը նշում է հայերենից (այսինքն Չամչենի գրի չեն առնված Գ. Աճառյանի կազմած «Քննություն Չամչենի բարբառի» բառարանում: Բնականաբար, եթե այդ բառերը չգործածվեին Չամչենում, ապա չին կարող թուրքացած համչենցիները կամ այդ տարածքի թուրքերը վերցնել հայերից և յուրացնել: Այս իսկ տեսակետից էլ մեր հեղինակի կատարած աշխատանքը նաև ի նպատ, ի լրացումն Չամչենի բարբառի ուսումնասիրության է արվում:

Ու. Բլեզինգը նուր քննությանը վերլուծել է նաև մի շարք տեղանունների կազմությունը՝ ի հայտ բերելով տեղանվանական (տեղանվանակերտ) ածանցներ, որոնցից են՝ Գալեր (կալ-եր), Գաղնուտ, Կոյրուտ (Կաղիմ-ուտ), Բոզուտ (բոզի-ուտ), քրուր-ուտ,

Մեցօվիտ (մեծ-հովիտ), Սոխովիտ (սոխ-հովիտ), Մեղվոր/Մեյվոր (Մեյոր-ավոր), Ծմակղափ (ծմակ-տափ): Այս օրինակներից ոչ միայն գաղափար ենք կազմում Համշենի բարբառի տեղանվանակերտ անանցների, այլև այն բաղադրիչ բառերի մասին, որոնք մասնակցում են տեղանուններ կերտելուն: Դեռ ավելին, հովիտ և տափ բառերը չկան սովորական բառերի Համշենի բարբառի բառարանում, և միայն շնորհիվ Բլեզինգի, տեղեկանում ենք, որ համշենցիներն ունեցել են իրենց բառապաշարում նաև այդ բառերի գործածությունը<sup>1</sup>:

Օտարազգի լեզվաբաններից Անդրե Պիսովիչը 1989թ. «Հայերեն փոխառություններ թուրքերեն բարբառներում» հոդված է (*Folia orientalia*, N 26, 123-129) հրապարակել: Օտար լեզվաբաններից թուրքերենի հայերենից կատարած փոխառությունների հարցով զբաղվողների մեջ ամենամաքոջական ուսումնասիրությունը պատկանում է Ռ. Դանկոֆին, որը 1995թ. հրապարակեց «Armenian loanwords in Türkisch» («Հայերեն փոխառյալ բառեր թուրքերենում») ծավալուն ուսումնասիրությունն անգլերեն լեզվով, ուր բերված են (քննարկված են) իր և այլոց՝ նախորդների կողմից նկատված 806+284=1090 թվով «Հայկական» և ոչ հայկական բառեր, որոնք թուրքերենին են փոխանցվել հայերենի բառապաշարում գտնվելու պատճառով, այսինքն՝ հայերենն է եղել միջնորդ օղակը:

Անկախ Դանկոֆից մենք 1993թ-ին «Իրան նամե» հանդեսի № 4-ում (էջ 31-32) հրապարակել ենք շուրջ 126 բառեր, որոնցից 31-ը այլ հեղինակների կողմից չեն նկատվել («Հայկական նորահայտ փոխառություններ թուրքերենում»): Սյուս հոդվածը տպագրվել է «Մերծավոր և Միջին Արևելքի երկրներ և

<sup>1</sup> Ու. Բլեզինգի հայտնաբերած հայերեն բառերի ցուցակները տեսնել հավելված 1 և հավելված 2 բաժնում:

ժողովուրդներ» գրքում № XVI «Հայերենից թուրքերենին անցած փոխառություններ» վերնագրով (էջ 230-241), ուր հայերենից թուրքերենի բարբառներին անցած 142 բառ է նշվում, որոնցից 60-ը չեն նկատված նախորդների կողմից (Երևան, 1996թ.): Գիրքը տպագրվել է ուշացումով:

Զարմանալիորեն նա չի հիշատակում մեր առաջին հոդվածը, որ լույս է տեսել իր գրքից 2 տարի առաջ Երևանում «Իրան նամե» հանդեսում էջ 31-32, համարակալված 126 բառ, որից 31-ը ինչպես նաև հետագայում լույս տեսած իմ մյուս հոդվածի 60 բառերը չկան նրա և հետագա ուսումնասիրողների ցուցակներում:

Ինչ վերաբերվում է հայերենից թուրքերենի ժողովրդական խոսվածքներին, բարբառներին, և գրական լեզվին անցած համարվող հետևյալ բառերին՝ յուղ-յուղորդ>yoğurt, տան գլուխ-dangalak, էշ-եթեկ, ոռոզ-arik և նման այլ չհիմնավորված «փոխառություններին», ապա ևս, Ամիրյանի վերաբերյալ մեր գրախոսականում նշել ենք այդ սխալները, որոնք չի կարելի «գիտական» համարել: Դրանք լավ չստուգված և չհիմնավորված պատահական մանություններ են, որոնք զծբախտարար տուրք է տվել նաև Գ. Աճառյանի նման զգուշավոր մի գիտնական (yağ, eşek, dangalak և այլն՝ կարծելով դրանց աղբյուրը հայերեն յուղ, էշ, տան գլուխ բառերն են հանդիսացել) (Իրան-Նամե, 1996թ. N 4-5, էջ 57):

11-րդ դարի հեղինակ Մահմուդ Կաշգարացին իր «Դիվան լուղատիտ-թուրք» գրքում (Ստամբուլ, 1915-1917թթ., 1941թ., Բուղապեշտ-Լայպցիգ, նույնը՝ Բրոքելման «Դեվոնու լուղատիտ-թուրք, Տաշքենդ, 1960-1963թ.», բերում է հետևյալ նախադասությունը. Devâ silkinsa eşâk ka yûk çakar – Ուղտը, որ ցնցվի, մի իշաբեռ դուրս կգա): Այսինքն, այս վկայությունը ցույց է տալիս, որ թուրքական լեզուները մինչև հայերի հետ իրենց չփումն

արդեն ունեին իրենց բառապաշարում *eşək* ձևը և ոչ թե հայերեն էշ-ի վրա ավելացրել են –*ək* ածանցը:

Դեռևս ռուսերենի սառ ձևն էլ է վկայում մի ավելորդ անգամ, որ իսկապես մինչև Դայաստան գալը թուրքական ցեղերն ունեցել են *eşək* ձևը, որից էլ թաթարական միջնորոշյալմբ՝ ռուսերենի սառ-ը 1568 բվականից վկայված: Մինչդեռ Խ. Ամիրյանը վստահել է Գ. Աճառյանին. «Դայոց էշ-ը դառնում է այդ բոլորի մայրը» /ՉԱԲ, 2, 117-119/: Ի թիվս նման վրիպումների, Խ. Ամիրյանը ոռոզել հայերեն ձևից է բխեցնում թուրքերենի *arık*, «առու, կանալ» բառը. նախ՝ ոռոզ-ել, ցրել, ջրարբիացնել բայ է. *arık*-ը՝ գոյական, երկրորդ՝ *arık* ձևն էլ Կաշգարացու մոտ վկայված է /*Er arık qazdı* «Տղամարդը առու փորեց» նախադասությամբ: Ուրեմն մինչև սելջուկ թուրքերի Դայաստան արշավելը 11-րդ դարից արդեն իրենց բառապաշարում նրանք ունեին հիշյալ բառերը:

Նախորդների կողմից թույլ տրված սխալներից մշեմք հետևյալները. դրանք երկու-երեք կարգի են.

Մի շարք բառեր բխեցվել են նույն հայերեն արմատից՝ սխալմամբ, օրինակ հայերեն դեզ բառը ունի իրանական ծագում կամ բնիկ հայկական է, ըստ Գ. Աճառյանի ՉԱԲ, 1, 658-659 հմմ. նաև պարսեզ, որ ծագում է թերևս զենդերենի *pardēz*-ից < *pairi daēza* = *pairi* «շուրջը» և *daēza* «ղիզված» բառերից (ՉԱԲ, 4, 69-70): Իսկ մյուսները չունեն հավաստի ստուգաբանություն:

Միայն իմաստների նմանությունը հաշվի առնելով՝ հայերեն թե՛ կամ թե՛ջ հոմանիշը նույնպես միացվել է դեզ-ին (տես ALT, էջ 42, նաև չաջ, չեջ բառերը, որոնք ունեն պարսկերեն ծագում պրս. *čāč* ՉԱԲ, 3, 627-628):

Հայերեն շեղջ - կոյտ, դեզ (ՉԱԲ, 3, 509) դասական շրջանից է և այդ ձևով առկա է բարբառներում շեխջ՝ Ալաշկերտ, Մուշ, Վան, Եվրոկիայում՝ չեջ (ԳԲ 879) նույնն է՝ չե՛ծ: Թուրքերենում *cec* (DS 1103) *cec*, *cec etmek*, *cec görmek* – ցորենի կոյտը չափել կալում (DS 873-874, I, 2): Սա կապ չունի չեջ (չանջ) բառի հետ: Թուրքերենում *şec*

- դարձանի հետ խառն հացահատիկ (DS 3756), նույն շեղջ – ից է առաջացել:

Միայն է աստառ բառը նույնացնել առաստաղ-ի հետ, ինչպես Դանկոֆն է արել ALT-ում, էջ 21: *Astar* բառը, որ ենթադրվում է պահլավերենից, պրս. *astar*-ի առկայությամբ (ՉԱԲ, 1, 277), եթե թուրքերենը պարսկերենից է վերցրել *astar*-ը, միևնույն է ոչ մի կապ չունի հայերեն առաստաղ-ի հետ: (DS 4425) *Astar*-ը ունի նաև ծածկ, ծածկոց նշանակությունը:

Միայն է նաև արևմտահայերեն կուզաս - *kukaz* «գալիս ես» բայը բխեցնել կկուզ *kakuz* «պագած» բառից (ALT 41, ԳԲ 578 կկուզ, կկոզ, կկոզիկ, կկուզ (ՉԱԲ, գ, 135, 204):

Միայն է սարառ-ի հետ շատարաը միացնելը (P, 37, 109) DS 3543, ALT, 114:

Միայն է ձող, զոլ և դող միավորել. դրանք տարբեր արմատներից են (տես ALT 44, 94 և Doğ DS 1535, ՉԱԲ 3, 157-158):

Միայն է ճօճ, ճօճել (ՉԱԲ 3, 217-228) բառերը առանձնացնելը: Գոճ՝ «ճահիճ» բառից, քանի որ ճահիճ իմաստը առաջացել է ճոճվել իմաստից (հմմ. ռուս. *mons*).

Միայն է վարդավառ-ը հայերեն վարդ բառից բխեցնելը (տես ALT 136-137): 70 տարի առաջ Գ. Դավիանյանը ապացուցել է խեթերեն *watararr*-ից լինելը: Ոչ մի կապ վարդի հետ չկա:

Չպետք է ցագառել պատահական նմանություններ, որոնք շատ զայթափոյն են: Օրինակ, հայերեն դրոզել և թուրքերեն *dürümek*՝ ցնցել (ՉԱԲ 1, 693), որը նկատել են ՆՉԲ-ի հեղինակները, Կարսոը և այլք. պատահաբար է նմանությունը:

Հայերեն դիհա ցուցական հորդորական ծայնարկություն, թուրքերեն *dehha* = դե, *deha* (II), *dihā* (II) DS 1404, 1400 *dendihā* - հայ. դեհա (ՉԱԲ, Ա, 323): Եվ ընդհանրապես ALT-ում նշված շատ բնածայնական բառեր, որ դրված են, որպես փոխառություններ հայերենից, հնարավոր է, որ պատահական նմանություններ են և երկու լեզուներում ստեղծվել են անկախաբար:

Մխալ է բրուտ-սւրստ (DS 3488, 4654) միացնել բրդել, փերթ բառերին (ALT, 33, № 84, նաև՝ էջ 147, № 743 փերթ)-ի հետ, որովհետև սւրստ-ը (հայ. բրուտ) նշանակում է կավ և իր զուգահեռն ունի խեթերենում սւրստ «կավ» ձևով (տես N. Mkrttschian, Neue Hethitisch-Armenische Lexikalische Parallelen, էջ 316-317, Budabest, Acta Antiqua, 1974):

Մխալ է թուրքերենի *şilar, şilar, şilor, şillor* ձևերը հայերենի *salor* (սալոր) բառից: (ALT 132) տես նաև DS 3767, *şilar* – խակ սալոր, DS 3778 *şilor, şillor* – սալոր: Որովհետև հայերենում, նրա բարբառներում երկու ձևերն էլ կային շատ վաղուց: Իսկ հայերենում սալոր ձևը եկել է խոտոփերենից կամ աքքադերենից, ինչպես այս մասին մենք գրել ենք *Древний Восток* համդեսում (N4, էջ 33-34), *СЯА* գրքում *šalluru*, էջ 283-284: Ուրեմն թուրքերենի *ş* – ով ձևերը ոչ թե *Salor*, այլ *şlor* հայերեն ձևից են: Ուրեմն փերթ, փրթել, բրդել բառերը ոչ մի իմաստային կապ չունեն բրուտ «կավ» բառի հետ:

3. Աճառյանի *dangalak < tan glux/dan glux* սխալի մասին, որ մենք գրել ենք ՊԲՀ-ի 137-138 էջերում, 1988թ. դ. 2 նաև Իրաննամեի գրախոսականում, 1996թ. № 4-5, էջ 57, դժբախտաբար դուրս է մնացել Ռ. Դանկոֆի տեսադաշտից և նա իր գրքի՝ ALT, 143 էջում (№ 717) կրկնում է 3.Աճառյանի սխալը: Թուրքերենի *dangalak*-ը առաջացել է պարսկերենի *dangala*-ից՝ -ak ածանցի հավելմամբ:

Գայերեն պոտուճ-ը թուրք. *potuc* (DS 4652) Ռ. Դանկոֆի գրքում միացված է փոթ-pot բառին (ծալք), մինչդեռ ճիշտը պոտուկ, պոտուկ բառին կցելն էր (ALT, էջ 149, № 751): Մանկական թրթուվախոսքերից (*Lallworter*) շատերը կարող են ստեղծված լինել հայերենում և թուրքերենում անկախաբար, մինչդեռ դրանք նշված են որպես փոխառություններ հայերենից:

Լա հաճախ է գրում իր գրքում, որ այս կամ այն փոխառությունը չի նշված նախորդների կողմից: Այսպես՝ հայերեն բարունակ «խաղողի ճյուղ» (ԳԱԲ, 1, 422) ALT-ն գրում է, որ չի

(նշված *Derleme Sözlüğü*-ում (էջ 26, № 53), մինչդեռ հենց իր գրքում գտնում ենք *barnak* (I) բառը (DS 534, № 2): Երկրորդն են հայերեն *caban* (ճուպան) և *çavan* (I), *çavana* (I) և *çavan* (չուան, չուական) բառերը (ALT, 122, DS 837, OTS, 148, հաստ պարան): Այս սխալը կրկնվում է ԵԳԲ-ի պատճառով, որի մասին գրել է Գ. Աճառյանը (ԳԱԲ, 3, 212): Մենք ևս անսխալական չենք կարող լինել. մի շարք կասկածելի բառեր ենք որել՝ առայժմ ավելի խոր քննություն չկարողանալով կատարել: Առաջիկայում նոր փաստերի օգնությամբ միայն կարելի է դրանց ճշգրտումը կատարել:

### ԹՈՒՐԲ ԷԹՆՈՍԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Թուրք էթնոսի ձևավորման պատմությունը հասկանալու համար, թե ինչպես և ինչ պատճառներով թուրքերենին փոխանցվեցին այդքան շատ հայերեն բառեր, պիտի հիշենք նաև թուրք էթնոսի լեզվի ձևավորման պատմությունը: Անատոլիայի ոչ թուրք բնակչության հարկադրական լեզվական ասիմիլյացիայի մասին բազմաթիվ վկայություններ կան հատկապես XIX դարի 30-ական թվականներից: Մ.Պ. Վրոնչենկոն գրում է. «Անկարայում հայերեն հայերեն չգիտեն... Իզմիրից ու Բուրսայից բացի հայ հոգևորականները ոչ մի տեղ հայերեն չգիտեն, և ծխակատարությունները կատարում են թուրքերեն՝ հայկական տառերով տպագրված գրքերով»: Շատ հույներ մինչև XIXդ. 30-ական թվականները այնքան էին թուրքացել, որ նույնպես մոռացել էին հունարենը: Բուն Կայսերիում հույները խոսում են թուրքերեն, ցածր հոգևորականությունն անգամ պատարագը անում է թուրքերեն (30, մ. II, էջ 231, տես նաև էջ 29,40,58, 241, *Вронченко М.П., Обозрение Малой Азии в нынешнем ее состоянии, составленном руском путешественником М.Б., ч. I-II, СПб 1839-1840*): Ե.Գ. Վեյգենբաումը գրում է. (1878թ.). «Արդվինում բոլոր հայերը առանց բացառության խոսում են թուրքերեն և իրենց

սովորությունների մեջ այնքան են թուրքացել, որ նույնիսկ միմյանց հանդիպելիս ողջունում են մուսուլմանական ձևով» (Ваугенбаум Е.Г., От Батума до Арвина заметки, ИКОИРГО 1879-1881гг. VII էջ 186): (Չեկուցագիրը չափազանցնում է, այդ ժամանակ Արդվինում հայկական դպրոցներ կային):

«Ներկայիս համշենցի թուրքերը իսլամն ընդունած հայերի հետնորդներն են, նրանց ժառանգները, որոնք գերազանցապես զբաղվում են երկրագործությամբ», - եզրակացրել է անգլիական հյուպատոս Վ.Ջ. Պալգրևը, որը 1869-1872թթ. ուսումնասիրել է Արևմտյան Անատոլիայի հյուսիսային շրջանները: Նրա եզրակացությունների մեջ գտնում ենք հետևյալ ակամատեսի վկայությունները համշենցիների մասին. «Համշենի շրջանն ունի 13. 190 բնակիչ (էջ 70), բոլորը հայեր են կամավոր տարածել են, բայց մեծ մասը դավանում է մուսուլմանություն: Համշենի հայերի մուսուլմանացումը կատարվել է աստիճանաբար և, կարծեմ, սկսվել է անենաշատը սրանից 100 տարի առաջ (այսինքն 18-րդ դարի առաջին քառորդում Ս. Ն.) այն շարունակվում է տևել մինչև ներկա ժամանակը» (էջ 71): (Пальгрев В.Дж., Анатолианские области. Консульские ответы о восточных причерноморских провинциях Турции за 1869-1872гг., ИКОИРГО, 1882, т. VII N2 нр.а.):

Սեկ այլ հեղինակ՝ Ի.Ֆ. Կազբեկը, նշում է. «Хамшенцы ютя помнят свое армянское происхождение, но не знают ни языка, ни веры предков и говорят только по-турецки», «Համշենցիները թեև հիշում են իրենց հայկական ծագումը, բայց նրանք չգիտեն նախնիների ո՛չ լեզուն, ո՛չ հավատը (էջ 99) և խոսում են միայն թուրքերեն» (Казбек И.Н., Три месяца в Турецкой Грузии, ИКОИРГО, 1876, кн. Вып. 1) (էջ 125): Համշենցիների թուրքանալու պատմությունը եզակի չէ: Որոշ վայրերի մասին պարզապես բացակայում են տեղեկությունները: Այն բաղաբի ու իր շրջակայքի հայությունը մասսայաբար թրջացավ 16-17-րդ դարերում, ինչպես վկայում են Ինճիճյանը, («Աշխարհագրութիւն», էջ 303),

ճանիկյանը, Ալիշանը, «Ակն և ակնցիք» գիրքը: Գ. Սրվանձտյանը, իրև ապացույց բերում է հայկական ծագումով մի քանի տեղանուններ՝ Խաչուկի, Վարդանիկի, Կեցախայրիկի և այլն: Ակնա շրջակայքի շատ գյուղերի անունները մինչև 19-րդ դարը դեռևս պահպանվում էին, ինչպես օրինակ՝Արակա, Հաբեղնոց (կամ Հարանուս), Էզրեկ, Փաքեր, Պոմշեն (Բազմաշեն), Ապրանք, Վեց փարա /վեց գեղի էգրեկ/, Միջին գյուղ, Վան գեղ, Փշատի, Ութիք (Ուեք), դար-գոխ, Ավարեկ (Ավերակ), Արտոս, արգո, Հողդար, Սանդուխ Պաղլարի, Սերկևիլ, Պարտիզակ, Աղվորիկ, Աղորիք, Բաջ Վարդենիք, Խասկալ, փետրական, Կաշո, Հոռապատ, Արևուրի, Խնձորիկ, Տանձիկ, Կժու, Դրնիկ, Վանկուկ, Պարանձոր, Խարանձոր, Հացետև, Աշուքևա, Թարխնիկ, Էրկին և այլն: Սրվանձտյանը պատմում է Կաշո գյուղի հայ բնակչության հավատափոխության մասին: Ինչպես քահանայի կինը ինքնասպան է լինում՝ իմանալով ճարպիկ Խաչուկոզլի քահանայի թրջանալու մասին ևս (Գ. Սրվանձտյան, 250-251): Վարդենիքի մեջ խաչօղիների ընտանիքը դեռևս հայերեն բառեր էր գործածում՝ գրպան, խաչքար, աղորիք, հովտուն, Նեղը տանի, վայը վրաղ, սատկին և այլն: Անգլիացի հնագետ Գ. Հոգարդը (David G. Hogarth) The Wanderind Scholar գրքում, որ լույս տեսավ Oxford Universiti կողմից 1925թ. Լոնդոնում, գրում է. «Այս ամբողջ շրջանին մեջ վաչկատնության որևէ հետք չկա: «Թուրքերը» նստակյաց երկրագործներ են, որոնք ամառը յայլա չեն ելնում, և որոնք դիմազօծող անգանազանելի են հայերուն դիմազօծելուն: Ասոնք անտարակույս սկզբնաբար արյունակից էին Հայերուն- կրոնափոխ բնակչություն մը, որ իրենց հավատքը պահած են: Այս տեսակ «թուրքեր» կզոնվին Արևելյան եփրատի արմուկին շուրջը ամեն տեղ: Տիվրիկի մտերքը «թուրք» գյուղի մը կհաջորդեք քրիստոնյա գյուղ մը, բայց Բինկյանն վեր աջ գետափին վրա իրարու հետ շատ ավելի խառն են: «Թուրքերը» կկազմեն Քենայի գրեթե ամբողջ բնակչությունը և Երզնջանի բնակչության կեսը, և նույն նրբագիծ, սպիտակամորթ տիպարը կզոնվի ամեն տեղ դեպի հյուսիս, մինչև որ կկորսվի լազերուն

վրացական դիմագծության մեջ: Չեմ կրնար Արևելյան Թրքահայաստանին՝ Վանի, Բիթլիսի, Մազկերտի (Մամազկերտի) և Էրզրոմի շրջանին մասին խոսիլ, բայց պիտի հանդգնիմ ըսել, թե հոն ալ, ամենուր, ուր քրիստոնյաներուն և այլազան ցյուրդ» ցեղախմբերուն միջև նստակյաց մահմեդական բնակչություն մը կա, որ ինքզինք «թուրք» կանվանե, գլխավորաբար հայկական ծագում ունի» (էջ 84-85):

Չոզարդը միշտ չակերտների մեջ է դնում այս շրջանի բնակչության՝ «թուրքական», «թուրքեր», «թուրք» բառերը՝ ընդգծելով նրանց հավատափոխված հայեր լինելը, որ կատարվեց բռնի ձևով 17-րդ դարում: (տես Ա. Քեչեան և Սկրտիչ Պարսամյան, «ԱՎն և Ակնցիք», Փարիզ, 1952, էջ 159) բարգմանությունը հեղինակներինն է:

#### ՄԻ ՀԱՐՔ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միայն մեր կողմից նկատված թուրքերենի բարբառներից ամացած հայերեն բառերը 400-ից ավելի են: Չայաստանի շրջափակման պայմաններում, երբ արտասահմանում լույս տեսած գրականությունը դժվարությամբ կամ գրեթե չէր հանում Չայաստան (Մատենադարան, Պետական Չամալաարանի և Ազգային Ակադեմիայի հիմնական գրադարան և Արևելագիտության ինստիտուտ) մենք անտեղյակ դրսում կատարված աշխատանքներին անկախաբար հրապարակել ենք մեր պրպտումների արդյունքները, որոնցում կան մի քանի տասնյակ կրկնություններ: Դրանց մի մասն էլ մեզանից հետո գրողների անտեղյակության արդյունքն է մեր հրապարակած հոդվածների: Նախ հրապարակել ենք 1993թ. Իրան Նամե № 4 31-32 էջերում 126 բառ և 1996թ. «Մերձավոր Աիջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (ՄՄԱԵԺ) սերիայի XVI հատորի 231-232 էջերում 142 բառ (տպագրվել է ուշացումով), այսինքն՝ ընդամենը 270 բառ,

որոնցից 100-ը բնավ այլոց կողմից չի նկատվել, իսկ կրկնությունների մի մասն էլ նրանց մեղքով է: Չետապայում, շարունակելով պրպտումները և 2004թ. Ստամբուլից ստանալով Derleme Sözlüğü բառարանի լրիվ 12 հատորները, ես կարողացա միայն իմ կողմից հայտնաբերված թուրքերենի հայերենից կատարած փոխառությունների թիվը հասցնել 500-ի:

Մենք, դարձյալ Չայաստանի Չանրապետության շրջափակման պայմաններով ենք ուզում բացատրել մեր հոդվածներից ավելի ուշ հրապարակված գրքերում մեր հայտնաբերած (թուրքերեն բարբառներում հայերենից կատարված) փոխառությունների մասին որևէ հղում չլինելը և ոչ առաջնության դափնին խլելու: Այսպես Ռ. Դանկոֆի գիրքը լույս է տեսել 1995-ին, իսկ մեր առաջին հոդվածը դրանից երկու տարի առաջ՝ 1993-ին և ոչ մի հիշատակություն իմ հոդվածի մասին, իսկ իմ երկրորդ հոդվածը լույս է տեսել գրեթե միաժամանակ Ռ. Բլեզինգի գրքի հետ, մի քանի ամիս ուշացումով և դարձյալ ոչ մի հղում:

Երբեմն մենք օգտվել ենք Գ. Աճառյանի ԳԱԲ-ից, որ հավաքված են «Բիրական» և այլ պարբերականներում տարբեր ժամանակներում լույս տեսած հայերեն բառեր, որ օգտագործվել են Թուրքիայի տարբեր գավառներում, վերցրել ենք նաև Խ. Ամիրյանի թուրքերենի զեղարվեստական գրականությունից և թուրքերենի բարբառներից բաղված 1-2 տասնյակ բառեր: Անացածը ինքնուրույն պրպտումների արդյունք է<sup>1</sup>:

#### ԿԱՇՈՅԻ ԵՐԵՑԿԿԼԿԱԼ ԵՆԳԵՆԴՐ

<sup>1</sup> Կրճատումներից ին նշանակում է Իրան Նամե (№4) հանդեսը, իսկ ՄՄԱԵԺ (XVI) Մերձավոր և Աիջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ գրքաշարը, որ լույս է տեսնում առ այսօր:

Կաշոյի սրբատեղին ցույց են տվել Գ. Սրվանձոյանին, որն էլ գրի է առել իր ուղևորությունների ժամանակ նրա հետ կապված լեզուները: Պատմում են, թե թուրքերի բռնությունները հատկապես անտանելի են դառնում 16-17-րդ դարերում: Որպեսզի կարողանան անհասելի ծանր հարկերից ազատվել, ամբողջ գյուղով (100 տուն) որոշում են ընդունել իսլամը: Կաշո գյուղի քահանային այլևս անելիք չէր մնում, և նա նույնպես բոլորի հետ ընդունում է իսլամը: Չանգվածային իսլամացման ընթացքը տեսնելով՝ իրիցկիներ շտապում է գույժը հայտնել քահանային, որն այդ պահին գյուղից դուրս՝ իր այգում էր գտնվում: Իրիցկիները կարծում է, որ քահանան կարող է գալ գյուղ և հորդորել իր ժողովրդին ետ կանգնելու իսլամացումից: Երբ եղելության մասին քահանային հայտնում է իրիցկիներ, քահանան թուրքերենով պատասխանում է. «Կայ քարը, սեն դառա գյավուրճա սոյլերսին, բեն չօջղան տաճիկ օլմուշում» (Կայ կնիկ, դու դեռ գյավուրբերե՞ն ես խոսում, ես վաղուց եմ տաճիկ դարձել):

Այսպիսի անսպասելի պատասխանը իրիցկեկան զարմացնում է, և սկսում է նա մագերը պոկել ու քահանային թողնելով՝ բարձրանում է մի բարձր ժայռի վրա և որոշում ինքնասպան լինել: Ժայռի վրայից նա դիմում է կամարակապցիներին. «Ես մենակ մնացի, հայեր, եթե Ձեր աստծուն կսիրեք իմ հոգու համար խունկ ծխեցեք և աղոթք ու պաշտոն մատուցեք»:

Կամարակապցիների աչքերի առջև նա անձնասպան է դառնում՝ բարձունքից իրեն նետելով եփրատի ջրերի մեջ: Կամարակապցիները նրա դիակը հանում են գետից և թաղում, Ամեն տաղավարի օր նրա գերեզմանը օրհնվում էր, ամեն կիրակնամուտի, երբ մայրերը տանիքների վրա խունկ են ծխում, այսպես են մրմնջում իրենց աղոթքը.

«Աստված օղորմի իհն ու նոր անցավորաց, անօրենն սպանվածին, ծով ու ցամաքը մեռածին, ճամփա շինողին, աղբյուր բերողին, կամուրջ կապողին»: Եվ ավելացնում էին. «Աստված

օղորմի Կաշոյի երեցկին մամային»: (Գ. Սրվանձոյան, Թ, Ա, 1 մաս, էջ 250-251):

Կաշոյի իրիցկեկա ավանդությունը գրի է առել նաև Ա.Յ. Շեփիկյանը («Ակնա ուխտատեղիներ», «Բյուրակն», 1900թ. N 10, էջ 90): Ակնում ևս հիշում էին Կաշո մամային. «Աստված օղորմի Կաշո մամային հոգուն»:

Թուրքացած այստեղի հայերի այգիների, թաղերի, արտերի, տների անունները դեռևս մնում էին հայերեն (Սրվանձոյան, ԹԱ 1, 254): Ա. Քեչեանը հիշատակում է, որ վարդենիթի մեջ խաչօղիների ընտանիքը հայերեն բառեր է գործածում, գրպան, խաչքար, աղօրիք, հովտուն, Ենոը տանի, վայր վրադ, սատկին և այլն (տես նաև Ա. Քեչեան, ԱԱ, 44):

Ռուսի սուլթանությունում միասնական թուրքերեն լեզուն բավական ուշ է ձևավորվել թուրքերի մոտ, որի էթնիկական կազմը շատ խայտաբղետ էր. դեռևս միասնական լեզու չէր ստեղծվել: Պաշտոնական (պետական) և գրավոր գրական լեզուն պարսկերենն էր, իսկ կրոնի լեզուն՝ արաբերենը: Ամեն մի առանձին շրջանում հաստատված ցեղի բարբառն էր իշխում տվյալ շրջանում, որի պատճառով էլ այն տեղացի բնիկներից մեծ ազդեցություն էր կրում. արևմուտքում հունական հիմք էր, արևելքում՝ հիմնականում հայերենն էր իշխողը, բայց որոշ չափով նաև վրացերենը, քրդերենը, ասորերենը (տես նաև Դ.Ե. Երեմեև, ԹԾ, 169):

Արաբ ճանապարհորդ Իբն Բատուտան նշում է, որ Անատոլիայի թուրքերը Պարոն, «տեր» իմաստով օգտագործում են ասորերեն չելերի-ն, որը ասորերենի ցլիբա-ն է (թուրքերենում չկա ց-ի գիտակցումը, որի պատճառով բառասկզբի ց-ն դարձել է չ): Դունարենի աֆանդեսը դարձել է էֆենդի «կրթված մարդ» (Իրակլանում պարսկերենից է): Բնականաբար իսլամն ընդունած, ապա աստիճանաբար թուրքացած էթնիկական տարրերն իրենց լուրման պիտի ներդնեին ապագա թուրքերենի ձևավորման ժամանակ:

Քոչվոր թուրքերը, որոնք ապագա թուրք ժողովրդի ձևավորման որոշիչ տարրն էին (բաղադրամասը), անցնելով նստակեցության, պետք է յուրացնեին տեղացի ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների, արաբների, վրացիների, նախկինում իրենց անձանոթ բարձր, շատ բազմապիսի երկրագործական մշակույթի հմտության «գաղտնիքները», տնտեսությունը վարելու նրանց փորձը, որը մշակվել էր դարեր շարունակ և հարմարեցվել տեղական աշխարհագրական պայմաններին. այդ յուրացումը շատ երկար ժամանակ էր պահանջում: Թուրքերի լեզվում մեծ տարբերություններ էին պահպանվել առանձին բարբառների միջև. թուրքերեն խոսակցական լեզուն բաժանվում էր Ստամբուլի, Իզմիրի, Անկարայի, Քոնյայի բարբառների, մալկանյան մի քանի և Արևելյան ու Չարավային Անատոլիայի, ոչ շարք բարբառների: Նախկին Քարաման քեյոքյան տարածքում տարածված բարբառը 19-րդ դարում այնքան էր տարբերվում Ստամբուլի և Իզմիրի բարբառներից, որ նկատելի էր նաև օտարերկրացիների համար (Langlois V., Voyage dans la Cilicie, Paris, 1861, էջ 25):

Թուրք եթնոսի ձևավորման պատմությանը բազմաթիվ եվրոպացի և թուրք մասնագետներ են անդրադարձել: Այս հարցը բավական լրջությամբ շոշափված է նաև Երեմեկի «Թուրքերի ծագումը» գրքում:

Նա գրում է, որ ոչ միայն բռնի, այլև «կամավոր» (այսինքն՝ այլ ելք չունենալու պատճառով) այլազգիներից իսլամն ընդունողներ կային: Եվ այդպիսիներն առանձին անհատներ չեն եղել, այլ լրիվ բնակավայրեր:

Տեղական ժողովուրդների իսլամացման գործընթացը սկսվել էր դեռևս Բյուզանդական տիրապետության ժամանակ: Բյուզանդիայի հարկային անտանելի բեռը ստիպում էր կամ լքել երկիրը, կամ իսլամանալ: Մ.Վ. Լևչենկոն գրում է. «XII դ. բազմաթիվ քաղաքներ և գյուղեր մասայացան, որոնց բնակիչները փախչում էին սելջուկ թուրքերի մոտ» (Левченко М.В., История Византии, М-А, 1940, էջ 223-224):

Սուլեյման Քութուբունջը, ինչպես ցիտում է նրան Գորդլևսկին. «11-րդ դարի վերջին սոցիալական ռեֆորմ անցկացրեց, որի նպատակն էր լադիֆունդիաներում աշխատող ճորտերին և ստրուկներին, որոնք զալիս էին թուրքերի մոտ, համարել ազատներ» (Гордлевский В.А. Государство Селджукидов Малой Азии М.-А. 1941, էջ 93):

Չանգվածաբար այսպիսի կարգավիճակում եղողներն ընդունում էին իսլամը, որպեսզի օգտվեն ազատների համար սահմանված արտոնություններից: Դայերը նույնպես ընդունում էին իսլամը, այսինքն՝ «կամավոր» թուրքանում էին, և դրա համար պատճառները երկուսն էին. մեկը դավանաբանականն էր, քանի որ բյուզանդացիների կողմից չէր հարգվում հայոց լուսավորչական դավանանքը և մերժվում էր այն, մյուսը՝ նյութական շահագրգռվածությունը: Որովհետև մուսուլմանները գտնվում էին արտոնյալ վիճակում. նրանք ավելի քիչ հարկեր էին վճարում, քան քրիստոնյաները: Ուստի քիչ թե շատ ապահով վիճակում լինելու համար միակ ելքը հավատափոխությունն էր: Ոչ-մուսուլմանները վճարում էին խարաջ, ռենտա-հարկ, որը բերքի մեկ երրորդից մինչև կեսն էր կազմում: Այս իսկ պատճառով էլ կրոնափոխ լինելը ձեռնուտ էր նաև տեղական ֆեոդալներից, որոնք պաշտոններ էին ստանում պետության մեջ:

Միջնադարում սկսված հայ բնակչության իսլամացումը շարունակվեց նաև հետագայում՝ նույնիսկ երիտթուրքերի օրոք էլ: Ինչպես նշում է Պ.Ի. Ավերյանովը, հալածանքների պատճառով շատ հայեր, փրկելու համար իրենց կյանքն ու զույքը, ընդունում էին իսլամը. 1912 թվին եղել են դեպքեր, երբ ամբողջ հայ գյուղեր ընդունել են մուսուլմանություն: (П.И. Аврянов, Этнографический и военно-политический обзор азиатских владений османской империи, СПб, 1912, стр. 16):

Աճճնական շահի համար կրոնափոխ լինելու դեպքերը լավ էին դրսևորված հենց «Ասք Դանիշմենդի մասին» էպոսում: Ավելի շատ հողեր ստանալու մարմաջը ոչ միայն ստիպում էր ուրանալ

սեփական կրոնը, այլև դիմել եղեմնագործության, անգամ չխնայել հարազատներին (եղբորը և այլն): Ահա երեք հայերի մասին պատմությունը, ուր Սարգիս, Էֆրունիյե (Եփրեմ), Արտուխ (Արթին) հայերից Սարգիսը, դիմելով Դամիշչենդին, նրա զորքերի օգնությամբ սպանելով եղբորը, զավթում է, տիրանում է նաև նրա հողերին:

Թուրք պատմաբան Յընանչը կրոնափոխված հայ է անվանում նաև իրեն՝ Դանիշմենդին (M.H. Yunanç, Türkiye tarihi Selcuklular devri, İstanbul, 1944, էջ 96):

Եվ այսպես, երկար ու ձիգ հարյուրամյակների ընթացքում թուրքացած հայերն ու հույները, դառնալով թրքախոս, միաժամանակ իրենց ավանդը ներդրեցին նախ խոսակցական-ժողովրդական լեզվի, ապա նաև թուրքերեն գրական լեզվի մեջ: Այլ կերպ չէր կարող պատահել: Նվաճող ցեղերն անցնելով նստակեցության՝ տնտեսությունն սկսեցին վարել տեղաբնիկների նման՝ վերցնելով տեղաբնիկներից ոչ միայն գյուղատնտեսության գործիքները, առտնին կենցաղային առարկաները, այլև դրանց անվանումները: Նոր երկրում հայտնված թուրքերը ստիպված էին ընդունել տեղական պայմաններով թելադրված բառապաշարը: Այսպես օրինակ, մուսուլմանական օրացույցը, որի ամիսները տարբեր տարիներին զուգահիշում էին տարվա տարբեր եղանակների հետ, չէր կարող ծառայել որպես գյուղատնտեսական օրացույցի հիմք:

Քոչվորների օրացույցը նույնպես պիտանի չէր նպատակի համար, քանի որ այս օրացույցը տարին բաժանում էր իրենց քոչերի սեզոնի համապատասխան: Թուրքական երկրագործական օրացույցի մյուս ամիսները ևս նրանք վերցրել էին տեղական օրացույցներից. այսպես օգոստոս հունական անվանումը՝ մայրս (mays) և այլն: Եվ այսպես նվաճողները, պարտադրելով տեղացիների իրենց լեզուն, իրենք էլ ստիպված էին փոխառություններ կատարել

հունարենից, հայերենից, անգամ քրդերենից և այլն: Թուրքերենի հոգևոր մշակույթում անփոխարինելի են փոքրասիական մշակույթից անցած բառերը, որի թիվն անցնում է 1500-ից:

#### ԹՈՒՐԵՐԵՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ /ՖԱՐՍԻ/ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Լեզվաբանների համար այսօր առանձնակի դժվարություն են ներկայացնում այն ընդհանուր իրանիզմները, որոնք առկա են և՛ թուրքերենում, և՛ հայերենի բառապաշարի մեջ: Արդյոք թուրքերենն ու հայերենն անկախաբար են պարսկերենից կատարել այդ կարգի բառերը, թե՞ թուրքերենն ստացել է դրանք միջնորդավորված՝ հայերենի միջոցով և ոչ թե ուղղակի պարսկերենից:

Իհարկե, հայերենի իրանական փոխառությունները կատարվել են շատ հին ժամանակներում մ.թ.ա. 8-5-րդ դարերում պահլավերենից և այլ իրանական լեզուներից և դարձյալ միջին դարերի պարսկերենից, դրանք գրանցված են գրաբար մատյաններում՝ մեր թվարկության հինգերորդ դարից սկսած (օրինակ, պիլ. բանտ և միջին պարսկական բանդ. երկու անգամ է փոխ առնվել), իսկ թուրքերենի ամենահին բառարանը Մահմուդ Գաշվարացու կողմից կազմվել է միայն մեր թվարկության 11-րդ դարում, այն էլ շատ համառոտ, ուստի թուրքերենի պարսկերենից կատարած փոխառությունների վաղեմությունն ստուգելը ոչ միշտ է հնարավոր: Այսպիսի հանգամանքներում լեզվաբանները կարող են երբեմն սխալվել որոշ բառերի փոխառության ակունքները նշելիս: Այս հարցի կապակցությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև այլ լեզվաբաններ: Այսպես, Ա. Այտընյանը շուրջ հարյուր հիսուն տարի առաջ գրում էր. «Անտարակույս նոյնութիւն կոչուածները շատ անգամ ալ այնպիսի բառեր են՝ որոնք գրաբարի և տաճկերենի միանգամայն հասարակ են. եւ որովհետև ոչ տաճկերէնը հայերենէն առած է եւ ոչ գրաբարը տաճկերէնէն կրնար առնուլ, կերթան միջին կետի մը վըրայ կը միանան՝ որ է

պարսկերեն լեզուն, որուն հետ գրաբարը շատ բան ունի խառն, եւ որմ տաճիկն առատ փոխառութիւններ ըրած է» (Ա. Այրընեան, ԶԲԱԿԴ, Նախաշաւիղ, էջ 268-269):

Իհարկե Այրընյանը շատ իրավացի է, սակայն մասամբ, քանի որ խոսում է միայն պարսկերենից անկախաբար հայերենի և թուրքերենի կատարած փոխառությունների մասին՝ չանդրադառնալով նույն կերպ արաբերենից կամ հունարենից փոխառյալ բառերին, որոնք նույնպես մեծ թիվ են կազմում և թուրքերենում, և հայերենում: Ու Ղանկոֆը մի քանի հարյուր պարսկերեն բառեր իր գրքում դնում է որպես հայերենի միջնորոշյաժամբ թուրքերենին անցած բառեր:

Իհարկե թուրքերենը նաև որոշակի պարսկերենից կատարած հարյուրավոր փոխառություններ ունի, որոնցով ողողված է նրա բառապաշարը: Ի՞նչ պատճառներով է թուրքերեն լեզուն ողողվել ֆարսի (պարսկերեն) և արաբերեն բառերով: Արաբերենը որպես կրոնի լեզու անխուսափելիորեն մտել է խոսակցական՝ բառապաշարի մեջ, իսկ պարսկերեն բառերը դատարանների, պայմանագրերի, վարչական միավորների լեզուն է եղել:

Այս իսկ պատճառով էլ զարմանալի չպիտի թվա, որ այսօրվա գրական թուրքերենում պարսկերեն փոխառությունների և արաբիզմների թիվը հսկայական չափերի է հասնում: Որքան էլ թուրք լեզվաբանները ճիգ ու ջանք են թափում թուրքերեն արմատներից արաբերեն և պարսկերեն տերմինների և բառերի համարժեքները ստեղծել՝ ազատվելու համար օտար բառերից, դրանք բառապաշարից վտարելու համար, միևնույնն է, նորաստեղծ համարժեքները լիարժեք փոխարինողներ չեն դառնում:

Սելջուկների և զլմանցիների ժամանակներում Քոնյայում և այլուր մեծատոհմիկ աստիճանավորները, վեզիրները, սուլթանները, պաշտոնատար անձինք իրանցիներ՝ պարսիկներ էին, քանի որ գրական լեզուն պարսկերենն էր: Ինչպես ընդգծում է

Վ.Ա. Գորդևսկին. «Իրն Բիրիի, Արսարայի ժամանակագրությունները, Աֆյաքիի մեծուարները գրված են պարսկերեն: Նույնիսկ ծագումով հույն Դասս օղուզը գրում էր պարսկերեն» (B.A. Гордлевский, Государство селджуков, М, Малолу Азису, М.-А. 1941, էջ 163):

Փաստորեն պաշտոնյաները միմյանց հետ խոսում էին պարսկերեն: Արբունիբում, դատական ատյաններում լեզուն նույնպես պարսկերենն էր, տիտղոսները արաբերեն և պարսկերեն, որոնք արմատացան և մնացին նաև այսօրվա թուրքերենում. Aheng (հանգ), ahmak, amber, aleni, ar (առ-ալանք), bam, camada, cet, çeynek, divan, patişah, şah, daya, ejdeha, nişan, örnek, aht, azad, baht, şen mih, bend, biver (բիւր), dest, direfş, dev, dadaver debir, dehliz, düşvar, düşmen, duzah, güz, delv, darbaza, destar, hengäma, giriban, gümrüh, gunagun, çulha, çirah, çikirik, çemen, çörek (չարեակ), kin (քեն), kümbet, küllük, nazik, numane, sümbük, reze (երիզ), peyman, kizir, palas:

Թուրքերենի իրանական փոխառությունների մի մասը իհարկե կատարվել է դեռևս Միջին Ասիայում, մինչև Անատոլիա նրանց գալը: Ներկայումս պարսկերեն փոխառությունների մի մասը թեև փոխարինվեց նորաստեղծ բառերով, սակայն դեռևս զգալի քանակությամբ իրանիզմներ են մնում թուրքերենում, իսկ պարսկերեն բառերի մի մասն էլ արդեն կատարվել են հայերենից՝ խոսակցական լեզվից, բարբառների միջնորոշյաժամբ, երկրորդ անգամ. այս է այն հիմնական պատճառներից մեկը, որ փոխառյալ բառերը հայտնվել են թուրքերենում զանազան արտասանություններով, երբեմն անճանաչելիորեն աղավաղված՝ թուրքերեն լեզվի հնչյունական անկատարության պատճառով:

Ուրեմն, թուրքերենի իրանական փոխառությունները մի քանի ակունքներից են գոյացել, ոչ միայն միջինասիական մերձեցումներից, այլև հայերենի հետ եղած վերջին հազարամյակի մերձեցումներից: Այս պատճառով էլ դժվար է երբեմն որոշել, թե

այսինչ պարսկերեն բառը ուղիղ պարսկերենի՞ց է անցել թուրքերենին, թե՛ հայերենի միջնորդությամբ, որովհետև հայերենի գրական լեզվում եղած մոտ 2000 իրանական փոխառություններից բացի կան նաև իրանիզմներ հայերենի զանազան բարբառներում, որոնք վկայված չեն գրաբարում: Սա կարևոր հանգամանք է, որովհետև հիմնականում թուրքերենին հայերեն բառերի հետ նաև հայերենի բառապաշարում արձատագած իրանական բառերը փոխանցվել են բարբառների միջոցով, կամ ավելի ճիշտ բանավոր խոսակցական լեզվից և ոչ հայերենի գրական լեզվից: Փորձենք քննարկել թուրքերենի իրանիզմները՝ որոշելու համար, թե նրանց մեջ որ մասն է հայերենից և որ մասը՝ ուղղակի պարսկերենից, ի՞նչ կարգի բառեր են դրանք:

ա/ հնարավոր են իրանական փոխառություններ երկու լեզուներում էլ անկախաբար, այսինքն՝ և՛ թուրքերենը, և՛ հայերենը պարսկերեն բառերը ուղղակի վերցրել են պարսկերենից, և ոչ թե հայերենի միջնորդությամբ է թուրքերենն ստացել դրանք (թ. ireng, հայ. երանգ, օրեօր-հայ. օրինակ, թ. կմնոց-հայ. քլունգ, թ. չաբե-հայ. ճար և այլն):

բ/ Հնարավոր է նաև թուրքերենում երկրորդ փոխառության դեպք, այսինքն՝ նույն բառը պարսկերենից ուղղակի և կրկնակի անգամ հայերենից լինել, բայց հնչյունական օրենքները նույնը լինելով՝ չեն կարող փոխառության իսկական աղբյուրը որոշել: Այստեղ որոշիչը միայն որևէ զրի առկված տեքստում դրանց իշխատակված լինելու փաստն է, որը սակայն չի կարող նույնպես ռեալ վիճակը պարզել, քանի որ անպայման բոլոր բառերը օգտագործել առիթ չի լինում:

Այսպես, հայերենի հաւան «սանդ» բառը որոշված է, որ պահպանվել է (ՀԱԲ, 3, 68-69), այն առկա է նաև թուրքերենում havan, բարբառներում՝ hevenk III, DS, 2350 հնչմամբ, սակայն Գ. Աճառյանը գրում է, որ նոր ժամանակներում «մտած է թուրքերենից» (ՀԱԲ, 3, 69): Մխալվում է Գ. Աճառյանը, քանի որ

թուրքերենից միայն բարբառային ձևը պիտի փոխ առնվեր, որն է՝ hevenk, մինչդեռ մեր բոլոր բարբառներում միայն առկա են հավան և հավանգ ձևերը (ՀԼԲԲ, 9, 249, Սեբաստիա, Բաղեշ, Թբիլիսի, Ղարաբաղ, Կարս, Համշեն, Արարատյան բարբառ և այլն): Ընդհակառակը հայերեն բարբառներից պիտի անցած լինի թուրքերենին, քանի որ արձանագրված է այն Կարսի, Իզդիրի թուրքերեն բարբառներում (DS, 2350), որտեղ հայերենի a-ն վեր է ածվում e-ի):

Որոշ իրանական (ֆարսի) բառեր մենք փոխառյալ ենք համարում հայերենից, ինչպես վարվում են նաև լեզվաբաններ (Ղանուկյը և այլք): Մեզ կարող են առարկել: Մեր պատասխանն է՝ եթե թուրքերենի տվյալ իրանական ծագում ունեցող բառը նախկին հայաբնակ շրջաններում է տարածված եղել, և այլ թուրք բարբառներում տարածված չէ, ուրեմն միջնորդ օղակը հայերենն է:

Հայերենից փոխառյալ բառերը, թուրքերենի հետ համարդվելով, դարձել են կայուն կապակցություններ՝ համալրելով թուրքերեն լեզվի դարձվածանին: Այսպես օրինակ, արտը հերկելու գործողությունն արտահայտելու համար թուրքերենը երկու հոմանիշներ է փոխ առել՝ herk կամ herg հայերենից և nadas-ը՝ հունարենից: herk բառից կազմվել է ak.rhergi- «ոչ ժամանակին կատարված հերկ» ժամանակից շուտ, արտոյի հերկ (DS, 152): akos etmek (DS, 159) ակոս անել- «արտը հերկել» դարձվածքը ծեռք է բերել նաև նոր իմաստ՝ խաբար տալ՝ համալրելով թուրքերենի ծածկալեզվի բառապաշարը (տես նաև Argo) egav etmek (ekav.geldi+etmek) դարձել է ele almek-ծեռք վերցնել կամ ekavlanmak (ekavlanmak)-գողանալ (BAS, 100): Կա նաև morukdamak – ծերանալ:

Egur nayim-buyurun-hամեցեք /հայերեն՝ արի տեսնեմ/ azı kiç—շատ քիչ թուրքերեն azı քիչ, նվազ և հայերեն քիչ բառերից, carmak çur-օղի, հայերեն ճերմակ և ջուր բառերից, karmir çur-գինի, հայերեն կարմիր և ջուր բառերից, paç etmek – պաչել,

հայերեն պաշ և թուրք etmek- անել բառերից, hanzo-սահան ծո – հայերեն սահան և ծո բառերից, matik atmak, matik oynamak hodak/g – հոտաղ բառից hodağkar (բայբուրդ), hodağcı, hodak yıldızi, hotak taş (DS 2418) լուծ բաշող եզների վզից լուծը ծանրացնելու համար կախվող կոճղը կամ քարը<sup>1</sup>:

andıra kalası - անտեր մնա, հայ, anter և թուրք kalmak բառերից,

dudu mama - դուդու մամա

Lor peyniri – լոռ պանիր

Kaldavar - փարախ հայ կալ և tavar բառերից

harazan hodağ - խարազանի հոտաղ,

gandırif kayı - կանդրիֆի փուկ, կաշի

Թուրքերենի չ, ց, ci, a ածանցյալների միջոցով կազմվել են մի շարք նոր բառեր՝ madıkcı – մատնիչ, momcı – մոմավաճառ, hanot+cu, հոտաղ բառից hodag+ci, lu ածանցով kütü – կուտով (անմշակ բամբակ):

### ՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԵՐԻՑ ԿԱԶՄԱԾ ԹՈՒՐԶԵՐԵՆ ԲԱՆԵՐ ԵՎ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ

Փոխառյալ հայերեն բառերից թուրքերենում կազմվել են բազմաթիվ նոր բառեր և դարձվածքներ:

<sup>1</sup> Հ. Աճառյանը բացատրում է. «Չօտաղ աստղը այն աստղն է, որ արևը մայր մտնելեն անմիջապես հետո կերևա արևմտյան կողմը, որ տեսնելով հոտաղները հոտերը տուն կդարձնեն (ԳԲ 677) այլ կերպ՝ Գիշերավար: Հայերենից թարգմանաբար գործածում են թուրքերը hodak yıldızi (DS 2391) Գյուլունչահան, Կարս, Թեքքե վայրերում»:

ա) Թուրքերեն ածանցյալների (ծնույթների) օգնությամբ նոր բառեր են կազմվում հայերեն բառերից (արմատներից): Օրինակ, հայերեն կաւառ - ալգի և պարտեզ ջրելու համար բացված փոքր առու, որ թուրքերենում gavar, gevar (i), geber, gefel, gevar, geval, gener (DS, 2009, 2010) geverlemek – երկրորդ անգամ ջրել կանաչիի պարտեզը (DS, 2010) **gevermek** – պարտեզ ջրելիս ջրի ճամփան բացել բառով (DS 2010) **gever çalmak, gavar çalmak** – Արտը կամ բուստանները ջրելու ժամանակ ջրի հոսելու ճամփան փոխել (DS 2010): Նաև փոխաբերաբար gevar vermek - գաղտնիք քաշելու նպատակով դիմացինին խոսեցնել (DS 2010):

ekav բայից ստեղծվել է egavlamak (BAS 100) **захватить, захват** (TPS, 261) - հափշտակել կամ egav etmek:

coh/cof – ուրախ, շեն ստեղծվել է coh, coh+ lu (lu=ունեցող) ձևությամբ: Հայերեն malez –ից malez olmak, **malez etmek** (DS 3146):

Հայերեն կոշիվ բառից girif –ը գործածվում է girif etmek կոշիվ անել դարձվածքում:

Հայերեն mayis – լուծ թրից բառից mayislamak (II DS 3141) գործած կտավը վիպ **mayis** –ի մեջ սպիտակացնել:

Հայերեն գդալ և պոչ բառերից ստեղծվել է getal boc – մի տեսակ բլոջ (հայերենում գրի չի առնված (DS 1964) Ռիզայե, Զայելի, Կափտան փաշա):

gom, arkalamak – մի տեղում հավաքվել, տես **kömlmek** + անասուններին մի տեղում հավաքել:

**bere sürmek** – կթելու տանել, **bere süren** – կթելու տանողը: Հայերեն ber –(բերել բառից) – կթելու բերել ստեղծվել է berlemek – կթելու բերել (DS 636) ALT-ում չկա:

Հայերեն բոց բառից **postlamak** - բոցվառվել (երբ նվազում է թոքերի կրակը, խեղձով (տերևներով և ճյուղերով) ուժեղացնում են կրակը) (DS 3472):

Ֆրիկ, Ֆռիկ fr - արմատից frlanmak – պտտել, **frfrük** – հոլ (DS 4503):

Քայերենի կիրակի, որ ծագում է հունարենի *kiriaki* բառից քուրդերենն ստեղծել է նաև *gireki, girei* ապա՝ *gireylemek* (DS 2082) կամ *girenlemek* - եղանակը փափկել:

*giravugün, giregiertesı, gireyertesı, girertesı* - և այլ ձևեր որ շուկայի օր, բազարի օր իմաստով է գործածվում (DS 2080) *girekiertezi* - բառացի՝ կիրակի հաջորդ օրը, երկուշաբթի:

*garavagün* – կիրակի օր, այսինքն՝ կիրակի է նշանակում *gök gireyi* – քրիստոնյա տոն (DS 2137) Քոնյա:

Քայերեն *kocak* բառից *köceklemek* (DS 2941) Աշնան ցանքսի ցորենը լավ արձատակալել:

Քայերեն *moruk* – ծերուկ բառից ստեղծվել է *cemekenli moruk* այսինքն՝ շուշաբանդով, ակնոցով ծերուկ, որը գործ է անվում որպես ծածկալեզու (ակնոցագործ նշանակությամբ (TPC, 41-1)) չունեն այլ բառարաններ և չկա նաև *Argo* – ին նվիրված գրքերում:

Քայերեն գոծ – *kom* (I), *köm* - ախոռ բառից *kömlemek* (II) DS 2914 – տավար, ոչխար, անասուններ հավաքել մի տեղում:

Քայերեն *epel* (ՀԱԲ, I, ...) ծագում է *apş, epu* բառից (տես **СЯА**):

*epic* – տակը կլորավում, մեջը՝ կանեփ եփելու նպատակով գործածվող մի տեսակ կաթսա:

*epmek tahtası* - եփելու տախտակ, վրան խճոր, լավաշ քացելու հարթ տախտակ, (Նիզդե, Բուլու):

*epmek tandiri* – այն կլոր սալը, որ դնում են խոր օջախի վրա (DS 1763):

*epmeksiz* - անաղուհաց, երախտամոռ, (ինարավոր է *kontaminazıa* երկու նման բուրբ *ekmek* – հաց, հայ, եփել – *epmek* բառից):

Քայերեն կեռ բառից *geroş vermek*

*Geron* բառից *geron vermek*

Քայերեն քաղիան բառից կազմվել է *kağan etmek, kehan*

*vermek, kehan etmek* դարձվածքներ DS 2593 և *kağanlamak* բայը, որի համարժեքն է **çapalamak**

Քայերեն բափ. *Tap* ուժ, հարված բառից *tapsız* - անուժ, քուլլ (DS 3828):

ափազ. *apazlamak* - բռան մեջ առնել

ԹՈՒՐԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ **Derleme sözlüğü**՝ ԲԱՈՒՐՆԱԻ ՆՊԱՍԵ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Թուրքերենի 12 հատորանոց բառարանը, որի հրատարակումն իրականացվեց 1963-1982թ. Թուրքիայի լեզվի ինստիտուտի կողմից (Türk dil kurumu) 4850 էջից է բաղկացած և ամեն էջում 15-30 բառերի բացատրությունն է տրվում՝ իրենց իմաստային տարբերակներով և տվյալ արտասանությունն ու իմաստային նրբերանգների տարածման վայրերի ցանկով: Բացատրված բարբառային բառերի ընդհանուր թիվը, իմաստային և հնչյունական տարբերակներով հանդերձ, անցնում է 125000-ից:

Այն անվանվում է «ժողովրդի բերանից (*halk ağzından*) գրի առնված բառերի բառարան»<sup>1</sup>:

Այս աշխատանքն անուղակիորեն իր նպաստն է բերում նաև հայերենագիտությանը և մասնավորապես հայ բարբառագիտությանը, քանի որ հայ լեզվաբանները եղեռնի պատճառով չհասցրին հայերենի բոլոր բարբառների նկարագիրն ամբողջությամբ տալ, և բազմաթիվ բարբառներ անհետ կորան բարբառախոսների ոչնչացման պատճառով:

<sup>1</sup> Türkiye'de Halk Ağzından Derleme Sözlüğü, 1-12, Ankara, 1963-1982. ikinci baskı: Ankara Üniversitesi basımevi-1993.

Երկրորդ պատճառը բազմաթիվ վայրերի (պատմական Ղայաստանի և նրա սահմաններից դուրս գտնվող գաղթօջախների) հայ բնակչության բռնի թուրքացման կամ հարկադրված թուրքացման ընթացքն էր, որի պատճառով նույնպես անհետացան մի շարք բարբառներ: Իհարկե թուրքացած հայերը անմիջապես չմոռացան իրենց լեզուն: Մինչև թուրքերենի յուրացումը նրանք զուգահեռաբար գործածում էին նաև հայերենը: Հատկապես այն բաները, որոնց համարժեքները չկային թուրքերենում (տան շինության հետ կապված բաներ, երկրագործական գործիքների և պրոցեսների բաներ և այլն):

Այս թուրքացած հայերի բառապաշարից հարյուրավոր բաներ փոխանցվեցին թուրքերեն խոսակցական լեզվին (բարբառներին) ապա՝ նույնիսկ գրական թուրքերենին, որոնք արտացոլված են նաև թուրքերենի գրական լեզվի բառարաններում<sup>1</sup> և ծածկալեզվի բառարաններում<sup>2</sup>:

Փաստորեն հայերենի մի քանի հարյուր բարբառային բաներ փրկվել են թուրքերենի զանազան կենդանի խոսակցական բարբառներին փոխանցված լինելու պատճառով, որոնցից շատերին ծանոթանում ենք այս բառարանի միջոցով:

ԹՈՒՐԹԵՐԵՆԻ ՀԱՅՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ի ՆՊԱՍՏ  
ՀԱՅ ԲԱՐԲԱՐԱՆԵՐԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ

<sup>1</sup> Türkçe Sözlük (Genişletilmiş) 7 baskı T.D.K. Yayınları sayı 505/2, Ankara, 1983, Pars Tuğlacı, Okyanus Ansiklopedik Türkçe Sözlük 2 basım, İstanbul, 1978.

<sup>2</sup> Mulki Aktunc, Büyük Argo Sözlüğü, İstanbul, 1990: Devellioğlu Ferit, Türk Argosu, Ankara, 1990/yedinci basım/.

1915-1923թթ. Թուրքիայում կատարված հայոց ցեղասպանությունը ոչ միայն ոչնչացրեց 2 միլիոնից ավելի հայ, այլև նրա մշակույթի բազմաթիվ բաղկացուցիչները՝ նրա ժողովրդական երգերը, նրա բանախոսությունը, նրա ազգագրությունը, նրա ճարտարապետությունը և բազմաթիվ քարառձեռները, որոնք դեռևս մենք չէինք հասցրել ուսումնասիրել:

3. Աճառայնի 1911թ. հրատարակած «Հայ բարբառագիտությունը» ընդամենը 31 բարբառի և 10 ենթաբարբառի (կամ խոսվածքի) համառոտ նկարագիրն է տվել, որոնցից հետագայում հնարավոր եղավ առանձին մեկագրություններով, այսինքն հանգամանալից, ուսումնասիրությամբ և բառարաններով ներկայացնել շուրջ 12 բարբառ: Մնացյալն այդպես էլ անհայտ ու անդարձ կորած են գիտության համար: Օրինակ մեզ համար մնաց անհայտ Ռոդոսթոյի, կամախի, Սթանոզի, Մոկսի, Ջմիռնիայի, Օրդուի, Բիթլիսի, Արնեշի և այլ չի՛հշատակված բարբառներ՝ իրենց առանձնահատուկ հնչյունաբանական-ձևաբանական առանձնահատկություններով և բառապաշարով:

Մենք կուզեինք նշել հատկապես բառապաշարի մեջ այն մասը, որը, պատմակրոնական թեմաներից դուրս լինելով, գրաբարով չի ավանդվել: Թերևս ավելի կարևոր արժեք են ներկայացրել այդ չգրանցված բաները:

Գրաբարով մեզ չհասած, սակայն ժողովրդա-խոսակցական բառապաշարի ակտիվ մասը հանդիսացող բազմաթիվ բաների աղբյուր են հանդիսանում մեզ համար հայերենի բարբառներից թուրքերենի բարբառներին փոխանցված և այժմ էլ այնտեղ գոյատևող մի քանի տասնյակ բաներ, որոնք կուզեինք ներկայացնել այստեղ:

Ի դեպ, հայկաբանությունները թուրքերենում նկատել են ոչ միայն հայ, թուրք, այլև անգլիացի, գերմանացի, հոլանդացի և այլ լեզվաբաններ:

Լեւ Անդրոթայ Պիտլիչ, /1989/, թուրք Չաֆերոլլու /1980/, Դանկոֆը գերմանացի, Ուել Բլեզինգ, հուլանդացի, Թիտցեն, հուլմ:

Թուրք լեզվաբանները հրատարակել են բազմահատոր բարբառային մի բառարան, որտեղ ընդգրկված բառերի մեջ հարյուրավոր հայերեն բարբառային բառեր կան և որ արժեքավոր են դրանք նրանով, որ յուրաքանչյուր բառի դիմաց նշվում է, թե որ զավառում կամ բնակավայրում են դրանք գործածվում (Վան, Բիթլիս, Սալաթիա, Արճեշ, Կարս, Էրզրում, Բայբուրդ և այլն): Իսկ այս հանգամանքը մեզ համար շատ է օգտակար:

Օրինակ, հայ բարբառագիտությունը չի ուսումնասիրել Ձոնգուլդաք, Բուլու քաղաքների և նրանց հարակից բնակավայրերի բարբառները, որոնք մեր գրառուներով պիտի հայ բոշաների խոսվածքներ լինեին, ինչպես նաև արևելյան՝ ում Ճյուղի խոսվածքներ այս շրջանից:

Թուրք լեզվաբան Չաֆերոլլուն Բուլու քաղաքի Ալաշամ բնակավայրից գրի է առել շուրջ 60 բառեր, որոնք գործ են ածում տեղի մաղագործները (elekciler) դրանցից մեծ մասը ամենօրյա գործածական բառերի թվին են պատկանում, օր. ջուր, չորս, չկա, աղբիկ, ախպար, արի, հաքքեխիք, հաց, կարգվել, ես, տասը, կմիկ, կրակ, գետին, շուն, թուրք, խմելիք, երեք, մատ, մրուր, նիստ, օսկի, գնա, ձեռք, ձի և այլն:

Յ. Անառայանն իր «Քննությունն Յամշենի բարբառի» ուսումնասիրության մեջ գրում է. «Յամշենի բարբառը զարմանալի մի քանի հատկություններով առանձնանում է մյուս հայերեն բարբառների մեջ» (1947, Երևան, էջ 11-15): Այնուհետև ասում է, որ Յամշենի բարբառում ԿոճԱԿ բառը գոյություն չունի. նրա տեղը հիլուն կամ ավելի ճիշտ՝ հալվի հիլունն է, իսկ կոճակել նշանակությամբ՝ ԴԻԼՈՒՆԵԻՆ ՕՆՏԵՆՈՒՇ (ոլլունքները անց կացնել) կամ պարզապես հիլլուշ (էջ 12): Բայց պիտի ուրախությամբ նշենք, որ Բլեզինգը գրի է առել ԳՈՃԳՈՒՆԵՐ = կոճկամայր բառը (տես N 56, էջ 48): Բլեզինգը գլխի չէ, որ գրի է

առել կորած մի բառ: Անառայանն ասում է, որ ԼՆԴԵՐՔ-ը նույնպես չկա, և այս զաղափարի համար չունին ոչինչ (անդ, էջ 11): Բլեզինգի կողմից այս բառը նույնպես գրի է առնվել ԼՆԴԵԿ ձևով (էջ 56, N 79, հմտտ, սանդեք-սանդեկ) Յամշենի բարբառում-երբ ձևույթը հնչյունափոխվում և դառնում է - եկ: Յ. Անառայանի կազմած Յամշենի բարբառի բառարանում չկան նաև հովիտ և տափ բառերը, որոնք Բլեզինգը բերում է ՍԵՇՈՒՎԻՏ, ՍՈՒՆՈՎԻՏ, ՃԱԿԿԿՈՎ տեղանուններում: Չկան նաև մի շարք բառերի /բայերի/ բազմապատկական, պատճառական ձևերը, օրինակ՝ ճանկըլտլամաք, գոռգոռուշ, լըզլըզուշ, (կան պարզ ձևերը՝ ճանկել, գոռուշ, լըզուշ), կամ թաք-ը կար, թաթման-ը չկար: Բլեզինգի կազմած 273 բառերից շուրջ 70-ը բացակայում է Յ. Անառայանի Յամշենի բառարանում: Օրինակ՝ տոթ, տիգ, տնագ, կողպեք, մշուշ, մախիր, ողվանք, հորթով, գոզոնց, քոթոթ, լակաման, գդալնոց, բոռ, չվան, կթող, բնակալ, սանդեք, խաշի, խլուրդ, թացան, խուխ, խուրծ, տափիչ, թմբել:

Այսպես էլ Յ. Անառայանն այն կարծիքն է հայտնում, որ ՏԱՂԱՎԱՐ բառը չի պահպանվում հայերենի բարբառներում, միայն կրոնական «Տաղավարաց տոն» արտահայտության մեջ է մնացել, մինչդեռ այն կա թուրքերենում ԴԱԼԱՎԱՐ/ԴԱԿՎԱՐ (dalavar-dalvar) ձևով: Կարիքի շրջանի բարբառներում ճոճ նշանակում է նաև «ճահիճ». այն նշված է միայն մեկ բառարանում՝ (ԲԳԼ):

Ամփոփելով նշենք, որ ավելի մանրամասն հատուկ ուսումնասիրությունները կպարզեն բազմաթիվ նոր հայերեն բառեր, որոնք մինչև այժմ չեն զրանցվել հայերենի բարբառային բառարաններում և այսօր, երբ Լեզվաբանության ինստիտուտը սլավագրության է պատրաստում հիմնատարանոց «Հայերենի բարբառային բառարանը», շատ կարևոր են թուրքերենի բարբառներում պահպանված հայերեն բառերը՝ համալրելու համար բաց թողած մեր բառազանձի փշրանքները:

**ԹՈՒՐԹԵՐԵՆ ՊՐԱԿԱՆ ԼԵԶԻ ԵՎ ՆՐԱ ԲԱՐԲԱՆԵՐԻ  
ՉԼՉՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՉՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Այսօրվա գրական թուրքերենում ընդունված է 29 տառ գրական հայերենի 39 տառի դիմաց, այսինքն 9 տառով (հնչյունով) պակաս է այն հայերեն գրական լեզվի հնչյուններից: Եթե հաշվի առնենք նաև թուրքերեն և հայերեն բարբառների հնչյունական առանձնահատկությունները, ապա պարզ կդառնա, թե որքան է բարդանում հայերենից թուրքերեն գրական լեզվին փոխանցվող բառերի արտասանության (կամ տառադարձության) հարցը:

Բնականաբար հայերեն բառերը նախ տեղական թուրքերենի բարբառներն են փոխ առնում, որոնք տարբերվում են իրենց հնչյունական առանձնահատկություններով. այդ պատճառով էլ նույն հայերեն բառը հայտնվում է թուրքերենի տարբեր բարբառներում տարբեր՝ 2-3, նույնիսկ 8-10 տարբերակներով:

Եվ բանի որ գրական թուրքերենը հայերեն բառերը վերցնում է հիմնականում իր բարբառներից (ավելի քիչ գեղարվեստական գրականությունից), ուստի կարող է երբեմն հայերեն բառը հայտնվել գրական թուրքերենում ոչ դասական տառադարձությամբ, այլ բարբառային արտասանությամբ: Այս է պատճառը, որ մենք չենք կարող սահմանել, թե որ հայերեն հնչյունի դիմաց որ թուրքերեն հնչյուն է լինելու:

Ահա թուրքերեն գրական լեզվում ընդունված այբուբենն իրենց արտասանություններով և հայերեն համապատասխաններով՝

Aa=ա	Gg=գ	Li=լ
Ss=ս		
Bb=բ	Gğ=ղ	Mm=մ
Şş=շ		
Cc=չ	Hh=հ	Nn=ն
Tt=թ		

Çç=չ	İi=ը	Oo=օ
Uu=ու		
Dd=դ	İi=ի	Öö=օ
Üü=յև ու		
Ee=ե	Jj=ժ	Pp=փ
Vv=վ		
Ff=ֆ	Kk=կ/ք/	Rr=ռ
Yy=յ		
Zz=զ		

Բացակայում են թուրքերենում հետևյալ հնչյունները պ, կ, խ, ո, ծ, ծ, ց, ճ, տ բարբառները գիտեն խ, գրականը՝ ոչ:

Բարբառները գիտեն X /խ/ հնչյունը, օր. Hane=խան և այլն:

Ուրեմն իզուր է ակնկալել, թե հայերեն բառերը իրենց ճիշտ արտասանությամբ կարող են փոխանցվել թուրքերենին: Ցախավելը թուրքերենում դառնում է սահավել (sahavel) zahavel, սոխառածը՝ սահառիչ (saharic), անիծածը՝ անիզազ (anizaz), բաղաբը՝ բահաչ (bahac), Կ'axhanc՝ կահան /kahan/, ճածը՝ (ծոլիդ)՝ սսուս (sursur), ծափը՝ գափ (zap), ցեխը՝ zih, ցորենը՝ զիրոն (ziron), ծլիկը՝ զիլիկ (zilik), ձողը՝ զող (zogh), ժանգը՝ զենկ (zenk), ճուղը՝ սուուու (sumur), ժանգաղը՝ ջենգեռ (cenđer) մի դեպքում՝ zenk, մյուս դեպքում՝ cenger և այլն:

Թուրքերեն գրական լեզվից կարծեք թե վտարվեց խ /X/ հնչյունը (հնչույթը) և խ-ով արտասանվող բառերը ամփոփող սկսեցին գրել հ-ով: Օրինակ խան, խանե բառերը նոր սերունդը ստիպված էր արտասանել հան, հանե: Բառարանագիր Մազազանիկը իր «Турецко-русские слова»-ում հատուկ նշում է, որ հ գրության (տառի) տակ նաև խ արտասանությունը պիտի ընկալել: Առաջին պարագրաֆում, որտեղ նա թուրքերենի այբուբենն է տալիս, յուրաքանչյուր տառի դիմաց ծանոթագրում է,

թե որ տառը ինչպիսի արտասանություն ունի: հ-ի դիմաց գրում է, որ այն արտասանվում է և՛ հ, և՛ խ (տե՛ս Վ.Ա. Магазаник, Турецко-русский словарь, Алфавит, N 1, М., 1931):

Մեծ մասամբ բարբառները պահպանել են խ հնչույթը, օրինակ, գրում են Sultan Selim han, արտասանում են Սուլթան Սելիմ Խան և ոչ թե Սուլթան Սելիմ հան: Ընդգծելու համար հ տառի խ հնչումը տակը զիծ է դրվում՝ **խ**:

Բառասկզբում հայերենի ձայնեղ պայթականները ձայնավորներին նախորդելիս դառնում են շնչեղ-խուլ՝ հաճախ հնչյունափոխելով իրենց հետ նաև հարևան ձայնավորներին. բազուկ > pezik (փեզիք), դուռզոց > durkas (քըրքաս), գաթա > kete (քեթե), դարակ > terek (թերեք), բարեկենդան > perkenden (փերքենդեն), և այլն:

Բառավերջին հայերեն բառերի խուլ պայթականները (կ, տ, ժ, ծ, պ) վեր են ածվում շնչեղ-խուլերի (ք, ք, չ, փ, ց), ինչպես՝ աելուկ > evelik (ելելիք), պստիկ > bızdik (բզդիք), պատիճ > bədic (բադիջ), անկուտ > anjūt (անգութ), ջերմուկ > çermik (չերմիք), փեթակ > petek (փեթեք), հատիկ > hədik (հեդիք), սոխառած > soħanç (սոխարչ), մուրճ > murç (մուրչ) և այլն:

Երկվանկ, երկու իրարահաջորդ ա ձայնավորները հնչյունափոխվում են ե-ի հատկապես կ (ք)-ով վերջավորվող բառերում՝ մարագ > merek, մարդակ > merdek, դարակ > terek, կափանք > kepenk և այլն:

Իսկ երեք իրարահաջորդ ա-երի առկայության դեպքում դրանք մնում են անփոփոխ՝ ավանակ > əvanak, ապարահ > abara, առաստաղ > arastak, աշտարակ > astarak:

Օճանք.: (քարաման > քիրմեն > kirmen բառում այս օրինաչափությունը չի գործում, որովհետև փոխառությունը կատարվել է բառի մեջ, երեք ա-երից մեկի կրճատված ձևից, երկրորդ ա-ի բացակայության պատճառով):

Բառավերջի հայերեն ձայնեղները նույնպես շնչեղ-խուլերի են վերածվում, ինչպես մարագ > մերեք (merek) և այլն:

Շատ հաճախ հայերեն բառերը հայտնվում են սարսափելի աղավաղված արտասանությամբ, որտեղ՝ հիմնավորելը դրանց հնչյունաբանական օրենքներով, ավելորդ է դառնում:

Չայերենից թուրքերենին անցած բառերի համար հնչյունական օրենքներ սահմանելը դժվարանում է մի շարք պատճառներով. հայերենի եռաստիճան պայթականների դիմաց թուրքերենի երկաստիճան պայթականների սխտեմ ունենալը (խուլ բաղաձայնների շարքի բացակայությունը): Սակայն հայերենի բարբառներից շատերը նույնպես երկաստիճան պայթականների սխտեմով են հանդես գալիս (օրինակ, Վանի բարբառը՝ բուրդուր, Դարաբաղը, որոնք չունեն ձայնեղ պայթականների շարքը), իսկ Չանձեմը, Պուլիսը, Կարինը շնչեղ-ձայնեղացնում են խուլերը և այլն: Այս իսկ պատճառով էլ բաղաձայնների համար միասնական օրենք չի կարող սահմանվել, մինևույն բառը տարբեր արտասանություններով է հայտնվել թուրքերենի այս կամ այն բարբառներում, օրինակ բակ բառը бага, bege, pag, pağ, peye, pıruut - pırut, գաջը - kac, գարնա(նա)մուտը - kernemut, դատարկը - derdek, terdek և այլն:

Չայնավորների համար նույնպես չունենք կայուն հանընդհանուր մի օրենք. պարսկերեն ծագում ունեցող բառերում նկատվում է բառակզբի կամ առաջին վանկի ա-ի հնչյունափոխվելը, դառնալը ə, ինչպես əjdaha - ejdaha, ..... asp - esp «ձի», tašt - tešt, bazuk - pezik և այլն, բայց այստեղ մեկ այլ բարդություն է առաջ գալիս: Արդյո՞ք a>ə հնչյունափոխությունը իրանական բառերի հին փոխառության համար է օրինաչափական և չի առնչվում հայերեն միջնորդական փոխառության հետ, թե՞ որևէ բարբառին հատուկ երևույթ է այս:

Նկատվում է մի ոչ շատ տարածված երևույթ՝ դա ց ձայնորդի անհետացման երևույթն է որոշ բառերում: Այսպես՝ հայ.

եղնիկ – թուրք. elik, հայ. եղինց – թուրք. eđic, հայերենում ևս եղի՞ծ  
ձևը կա, հայ. երթանք-երթակ > ertak:

#### ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Աշխարհում առաջին Մեծ ցեղասպանությունն իրականացնելուց հետո, թերևս մի ավելի մեծ և ուժից վեր խնդիր է կանգնած թուրք պատմաբանների և լեզվաբանների առջև. դա Թուրքիայում, մինչև եղեմը հայերի գոյության ժխտման հարցն է կամ այդ հետքերի ջնջման հարցը: Եթե նրանց հաջողվում է քանդել ու ոչնչացնել եկեղեցիները, գերեզմանները, խաչքարերն ու վիճազարկան արձանագրությունները, այսինքն՝ նյութական հուշարձանները մի քանի հազար հայկական եկեղեցիներից, (բացառությամբ Ստամբուլի մի քանի եկեղեցիների) այսօր Անատոլիայում ընդամենը 4-5 եկեղեցի է մնացել: Ապա կա մի ասպարեզ, որտեղից հայոց հետքերը ջնջելը, թվում է, այլևս անհնար է լինելու: Դա՝ նստակյաց կենցաղի հետ կապված նոր ապրելակերպի, հմտությունների ընդօրինակումն է, որի հետ ամենվիճի ամբողջ հայկական բառապաշարը մուտք է գործել թուրքերենի խոսակցական լեզվի մեջ: Դետաբըքիրն այն է, որ յուրաքանչյուր գավառում հայերի հետ շփվող թուրքերը բառերը փոխ են առել այն արտասանությամբ, ինչպես խոսել են հայերը, այսինքն՝ տեղական հայերի բարբառով: (Համշենում, Էրզրումում, Կարսում, Իզդիրում և այլն) թուրք մասնագետները ճիգ ու ջանք չեն խնայում իրենց վրա հայերի թողած մշակութային ազդեցությունը հերքելու համար, այս իսկ նպատակով կեղծում են և՛ ազգագրությունը, և՛ լեզվական իրողությունները: Այսպես օրինակ, թուրքերենի բառարաններում հազվադեպ են նշվում բառերի հայկական ծագումը. լավագույն դեպքում բացատրվում են՝ halk dilinden («ժողովրդական լեզվից»): Դարց է առաջանում. ո՞րն է այդ, այսպես ասած «ժողովրդական լեզուն» ո՞ր խալիսի լեզուն է,

իրենից ի՞նչ է ներկայացնում այն նրա մեջ հայերեն բառեր դրսեղի՞ց են հայտնվել: Դրանց հայկական լինելը ինչպե՞ս կարելի է մխտել, երբ այդ ժողովրդական լեզվից, այսինքն ժողովրդական թուրքերենից վերցված բառերը գոյություն չունեն թուրքական մյուս քույր լեզուներում, որով նրանց բնիկ թուրքական ծագումը հերքվում է: Իսկ ինչո՞ւ պատիվ չհամարել դրանց հայկական ծագումը բառարաններում ևս նշելը: Պարզ է, որ բառը փոխ է անվում առարկայի կամ երևույթի հետ միասին, իսկ եթե բառի կողքին նշվի նրա ծագումը, ուրեմն դա կլինի անուղղակի խոստովանություն հայկական մշակույթի և հայերենի ազդեցության մասին թուրքերենի վրա, որը այնքան էլ հաճելի չէ: Մյուս կողմից հնարավոր է, որ ոչ թե գիտակցորեն են սքողվում այդ կարգի բառերի հայկական ծագումը, այլ պարզապես թուրք լեզվաբաններին չի հետաքրքրում նման բառերի ծագման, ստուգաբանության հարցերը: Իհարկե սա ինքնախաբեություն է, հայ մշակույթի ազդեցության ուրացում, հայոց ցեղասպանության ուրացման մարմաջը հասցնում է գիտության նենգափոխության:

Նվաճող և նվաճված ժողովուրդների միջև անխտասափելի երևույթ են լեզուների և մշակույթների փոխներթափանցման իրողությունները:

Համայնավարության վարդապետության հիմնադիրները ահա թե ինչ են ասում այս մասին. «Պատմության անխախտ օրենքի համաձայն բարբարոս նվաճողները իրենք էին նվաճվում իրենց իսկ նվաճած ժողովուրդների ավելի բարձր քաղաքակրթության կողմից» (К. Маркс, Ф. Энгельс, Социализм, изд. 2, т. 9, стр. 225, նույնը Еремеев, Этногенез турак, с. 327): Խոստովանելով հայոց լեզվի և մշակույթի ազդեցությունը թուրքերենի, թուրք ժողովրդի վրա՝ դառնում է վկայություն հայերի գոյության համար Թուրքիայում:

Այսօր, ի զորու չեն թուրք ազգագրագետները հերքել հայկական մշակույթի ազդեցությունն արիեստների, րնակարանաշինության, գյուղատնտեսության, մասամբ նաև

անասնապահության, երաժշտության, պարարկման, այգեմշակության, հանքագործության ասպարեզում: Մենք անասնապահության ազդեցությունը համարում ենք մասնակի, որովհետև թուրքերը, եթե ունեին ոչխարապահությունը (փոքր եղջերավորներ), ապա չգիտեին խոշոր եղջերավորների բուծման, խնամելու հմտությունները՝ կապված տեղակլիմայական պայմանների հետ: Այնուամենայնիվ, անասելի ջանքեր պիտի գործադրեն այս ամենը հերքելու համար:

Մենք կաշխատենք բերել հայ մշակույթի ազդեցությունն ապացուցող բազմաթիվ փաստերից մի քանիսը, որոնք գիտակցաբար չեն մատնանշում թուրք գիտնականները կամ պարզապես հարկ չեն համարում անդրադառնալ այդ իրողությանը՝ համարելով հայ մշակույթը նույնպես իրենցը՝ սեփականը, այսինքն մարաված:

1950-ական թվականներին, երբ հրապարակվեց եփրատ գետի վրա ջրամբարտակ կառուցելու թուրք կառավարության որոշումը (Keban Projesi) ամբարտակի հատակում մնալիք բնակավայրերի ազգագրությունն ու բանախյուսությունը, տեղի բնակիչների կենցաղն ու մշակույթը, կացարանների կառավորումն ու արհեստներն ուսումնասիրելու, նկարագրելու և լուսանկարելու նպատակով այդ վայրերն ուղարկվեցին բազմաթիվ գիտնականների խմբեր, որոնք հետագայում հրապարակեցին իրենց դիտարկումներն ու նյութերը, չափագրություններն ու բանախյուսական նմուշները: Նման բնակավայրերից մեկին՝ Pulur-ին<sup>1</sup> (փուլուր) է նվիրված Համիտ Քոչայի գիրքը, որն էլ հենց հայկականը ուրանալու և անտեսելու թուրքական մեծ քաղաքականության վառ մի նմուշ է: Խոսքը Զմշկածափ մոտ

<sup>1</sup> Ի դեպ, չի կարծում, որ pulur-ը նույնպես հայերեն ծագում ունի. հայ բլուր բառը ճիշտ թարգմանված ենք գտնում Derleme Sözlüğü-ի IX հ., էջ 3485-ում «փոքրիկ բարձունք» բացատրությամբ (pulur-«Küçük tepe»):

գտնվող Բլուր բնակավայրի մասին է, որն արդեն ներկայումս գտնվում է ջրամբարի հատակում: Նրա բնակչությունը տեղափոխվել է նոր բնակավայր:

Երբեմնի հայկական այս բնակավայրի մշակույթը հեղինակի կողմից ներկայացվում է որպես ալիք թուրքական մի գյուղի մշակույթ (տես Pulur, էջ 85, ծանոթ. 1): Գրքի 118-125 էջերում նկարված են չթրած աղյուսից պատրաստված 1-3 հարկանի տափակ կտուրներով, կախովի պատշգամբներով բուն հայկական տների նմուշներ, որպիսիք կառուցվում էին չթրած աղյուսով այն վայրերում, որոնք հեռու էին քարահանքերից:

Բնականաբար այսպիսի տներում նստակյաց կյանք վարող մարդիկ են բնակվում, իսկ եթե թուրքերի նախնիները ոչխարապահ, քոչվոր կենցաղի մարդիկ են եղել և ապրել են վրանների տակ, ժամանակավոր կացարաններում, ուստի պիտի ինչ-որ մեկից ժառանգեին, սովորեին (թեև ուզ և ալևիները) նման կացարաններ կառուցելու հմտությունն ու կառուցման տեխնիկան: Իսկ այդ մեկը կարող էր լինել միայն հայը՝ այդ գյուղի տերը, այդ գյուղին անուն տվողը: Սկսած գյուղի անվանումից՝ ԲԼՈՒՐ, այստեղ անուն ինչ, այսինքն՝ տան կառուցման տեխնիկային առնչվող շինանյութերի անվանումներից ու գործիքներից մինչև երկրագործությանն առնչվող գործիքների, բույսերի, ծառերի, երկրագործական պրոցեսների անվանումները հիմնականում հայերեն են: Բնականաբար այդպես էլ պիտի լինե, քանի որ նոր միջավայրում և նոր կենցաղի անցած ժողովրդի բառապաշարում չէին կարող լինել տան շինանյութերի կամ մասերի, կառավորման, կառուցողական տեխնիկայի անվանումներ, այլ միայն վրանի մասերի և նրա կառուցման հետ կապված գործողությունների անվանումներ: Բերենք օրինակներ՝ Pulur գրքից, որտեղ Քոչայը այս բնակավայրի ազգագրությունը ներկայացնելիս սկսում է տան՝ բնակարանի և նրան կից օժանդակ կառույցների բաղադրիչների նկարագրությունից: Գրեթե առանց բացառության, այստեղ ամեն ինչի անունը հայկական է.

ա/ Տան ծածկի բաղադրիչներից նա գծագրերում /էջ 8-8-9/ յուրաքանչյուրի վրա գրում է mertek=մարդակ, keran=գերան, anstak=առաստաղ (իսկ այլ բնականայրերում, ըստ «Ղերլեննե սոզլուդի», սովորական է նաև hezan-հեծանը, çörtən=ջրհորդանը /9/, darbaza=դարպասը, püsürük և այլն):

բ/ Տան /շենքի/ օժանդակ կառույցներից նշվում են merək=մարագ /էջ 7/ ahır=ախոռ /2.7/, kom/köm=գոմ /2/, peteğ=փեթակ /4, 16, նկ. 5/ çirahbağ/հ=ճրագպահ /7/, tandır=թոնիր /նկ. 26/, ambar=ամբար /4/, çeper=չափառ, z/soğna=սողնակ /15/, pihiri=բուխարիկ /1/, divan=ղիվան, loğ/daş/=լողքար /8/, haguge=ագուգա: Ի մի բերելով հայերենից թուրքերենի փոխառյալ բառերի ցուցակը (գրական թուրքերենին և ժողովրդախոսակցական լեզվին անցածները միասին) գալիս ենք այն եզրակացության, որ դրանք հիմնականում առօրյա կենցաղի, հողագործության, երկրագործության, մասամբ նստակյաց ամսանապահության, շինարարության և արհեստների հետ կապված բառեր են, որոնք նստակյաց նոր կենսածին են առնչվում: Եթե Քոչայի Pulur-ը նվիրված էր կենտրոնական Անատոլիայի բնակավայրերից մեկի ուսումնասիրությանը՝ ազգագրական և այլ տեսակետներից, ապա մեկ տասնյակից ավելի ուսումնասիրություններ նվիրվեցին Թուրքիայի արևելյան և հյուսիս-արևելյան շրջաններին, նույնիսկ մեկ շրջանի կամ կենտրոնի համար 4-5-ը տարբեր հեղինակների կողմից. այսպես՝ Կարսին են նվիրված Ա. Թիսցեի, Ա. Էրջիլասունի, Ա.Օլջայի և Էրջիլասունի Կարս-Արփաչայ ուսումնասիրությունները, Էրզրումին Ֆ. Քըրգիօղլուի, Աթըլջանի, Է. Գեմալմազի ուսումնասիրությունները, Կ. Էմիրօղլույի աշխատանքը Մաշկային, Չ. Գյուլերի գործը Խարիուսի (իմա՛, Խարբերդ) բարբառին նվիրված և այլն, որոնց գրի առած բարբառային նյութերը հարստացնում են և ընդարձակում թուրք լեզվաբանների գիտելիքները թուրքերենի բառապաշարի արդի շտապի մասին:

Որոշ թուրք հեղինակներ վերավորական են համարում այն յրրոլությունը, որ հայերեն կամ հայերենի միջոցով (հայացած օտար բառեր) շուրջ երկու հազար բառեր են անցել թուրքերենին: Քայց չէ՞ որ վրանարանակ մի ժողովուրդ, եթե անցնում էր նստակեցության, պիտի ճոր բնակարանների շինության բառերը, հեծան, մարդակ, գերան, առաստաղ, չորթեն /ջրհորդան/, դուռոց, սողնակ և այլն վերցնեի հայերենից, կամ եթե խոշոր եղջերավոր անասուններ են սկսել պահել, պիտի հարկադրաբար հայերենից վերցնեին տավար, գոմ, կովկակ, մուր, նախիր, հուտաղ, նախրապան և այլն, կենցաղային մի շարք իրերի անվանումներ սկսած թոնիրից ու նրա մասերից տարբեր չափերի ամանեղեններից թոնիր մաջրելու շորը՝ փարտիչ, անթոց, խաչերկաթ, կարաս, ցախավել, տեփուր և այլն: Դողմաշակության հետ կապված գրեթե բոլոր բառերը հայկական են /հերկ, արոս, խոզան, կորդ, ակոս, կորի, ագուգա, ոփ, խոփ, մաճ, գերանդի, կամ հորիկ, մաճկալ, կալ, տափան, մանգեռ և այլն/:

Անգամ մշակույթին վերաբերող բառերից պարերի 20-ից ավելի անվանումները հայերեն են (և այդպես էլ կոչվում են՝ էրմենի բարլարը) Աղջկա պար-Աիջք բար, Ծափիկ պար-Չեփիկ բար, Քաղոց պար-Քաղոս բար, Լավիկ պար-Լավից բար, Վարդավառի պար-Վարթիվոր բար, Թեշի պար-Թեշի բար, Չափ պար-Չափ բար, Թեևլո, Մարո, Դոյ նար, Դամշենի, Գյունրիի և այլ պարեր: Երբ մի ժողովուրդ այնպիսի բարձր մշակույթ է ստեղծել, որ աշխատանքի, վար ու ցանքի, քաղի հետ կապված բոլոր պրոցեսների վերաբերյալ պարեր է ստեղծել և դրանցից էլ թուրքերն են ներկայումս օգտվում: Ինչպիսի միլիլիզմով, լկտիթյամբ «Բարլար» գրքի հեղինակը՝ Սամի Յավեր Աթամանը, փորձում է այս պարերի ծագումը Սիջին Ասիական համարել (Barlar, Istambul, 1966, էջ 27): Ֆուատ Քիլիբալույն գրում է. «Դայերը կուլտուրապես ավելի ցածր մակարդակի վրա են գտնվել, քան թուրքերը» (Edebiyat Araştırmaları Ankara, 1966, 268): Սիջազային

փառատոներում հայկական պարերը նրանք ներկայացնում են որպես թուրքական մշակույթի նմուշներ՝ արժանանալով մրցանակների: Ի՞նչ խոսք, կա այստեղ վիրավորական, երբ ծովագնացության, ձկնորսության հետ կապված հարյուրավոր բառեր թուրքերենում ունեն հունական ծագում:

Չէ՞ որ Միջին Ասիայում քոչվոր թուրքերը ծով չեն ունեցել և երթևեկել են ավազուտներում, ինչպես կարող էին նրանք իրենց բառապաշարում ունենալ նավերի տեսակների, մասերի, ծովային քամիների, ձկնորսության, ձկների տեսակների, ձկնային կերակուրների հետ կապված բառեր և անապատներում ապրող իրենց ապուպապերի բառապաշարից ժառանգելով՝ բերել դրանք Անատոլիա:

Քաջ գիտակցելով բազմաթիվ բառերի հայկական ծագումը, նրանք բառարաններում չեն նշում դրանք:

Թուրքացած, իսլամն ընդունած հայերը հայերեն հարյուրավոր բառեր են իրենց հետ բերել, ներմուծել թուրքերենի մեջ, որովհետև դրանց համարժեքները չկային թուրքերենում:

Քանի որ թուրքերենի հնչյունական համակարգը ուղիղ ինը հնչյուններով պակաս է հայերենից, ապա շատ հայերեն բառեր անձանաչելի են դարձել՝ աղավաղվելով ծ, ծ, ց, ճ, պ, տ, կ, խ, ո հնչյունների բացակայության պատճառով:

#### ՈՌՈՒՆԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՉԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնականաբար թուրքիան հարևանության մեջ էր մահ Ռուսաստանի հետ, թեև անջրպետված Սև ծովով: Իհարկե, նման հարևանությունը չի կարող նույնը լինել հայ- թուրք անմիջական հարևանության հետ, երբ շփումները առօրեական են եղել: Իսկ ինչո՞ւ ծովից այն կողմ գտնվող ուկրաինացիների հետ թուրքերի հարևանությունից շատ աննշան բառեր են մնացել թուրքերենում, որն էլ ապացույց է այն բանի, որ Ուկրաինացիներն ամենօրյա շփումներ չեն ունեցել թուրքերի հետ, և լեզվական նստվածք չի

առաջացել նման շփումներից: Հիմնական միջնորդ օղակը հայերենն է, քանի որ այլ լեզուներից թուրքերենին փոխանցվելու ուղիները բացառված են եղել<sup>1</sup>: Այստեղ չեն նշվում ոչ մի բառ ռուսերենից, որ թուրքերենին են փոխանցվել նույնպես հայերենի միջնորդությամբ: Ահա հայերենի միջոցով թուրքերենի արևելյան, հյուսիս-արևելյան բարբառներին փոխանցված շուրջ վեց տասնյակ (60) բառերի ցուցակը, որոնց զուգահեռները գործածվում են Դիադինի, Կարիմի, Կարսի և հարակից շրջաններում:

<sup>1</sup> Ռուսական մշակույթի ազդեցությանը ենթարկված էին հավասարապես թուրքիայի Արևելյան և Գյուսիս-արևելյան շրջանների թուրք և հայ բնակչությունը, որոնցից մի մասը ներկայումս բնակություն է հաստատել Սևանա լճի ափին՝ պահպանելով բարբառը համեմատաբար անխաթար:

DS 163-164 akučka - պատշգամբ, ապակեպատ տուն (Արտամուշ, Շավշատ, Արդվին), - ակուշկա, (ԴԲ150): DS 370 atkaz - հրաժարում տրказ - ատկազ (Շավշատ, Արդահան, Գյումուշհան) 164 akučka - 50-60 չափի փոքրիկ լուսամուտ (Իզդիր, Կարս, Սարիղամիշ)-ակուշկա, (ԴԲ 150): 470 badosj - կաշի (Իզդիր, Կյուրասոն, Թաշբուրուն)-պառոշ (ընդհ.) 471 badval (I) - 1. ներքնահարկ, մատան, մութ տեղ, 2. մատան, շտեմարան, ամբար, փեթերեկ, Տրապիզոն, Արդվին, Շավշատ և գյուղերը, Յուսուֆեյի, Արփաշայ, Կարս, Քըզը, Չաքչաք padval (II), 3. Նարդի խողում, ներքևի դուռը մտնելը: - պաղվալ (ԴԲ 152): 519 banga (I) - մետաղյա, ապակյա անոթ - բանկա (ԺՀԼԲԲ, 1, 282, ընդհ.): 503 baldun, balton (I) - վեռարկու (Բայբուրդ, Իզդիր, Կարս, Սարիղամիշ) = պալտոն (ԴԲ 152):

470 badnus, bednus - մատուցարան, մեծ սինի (Թաշբուրուն, Իզդիր, Կարս) - պտոնոց (ընդհ.): 504 baigun - բալկոն, պատշգամբ - (Թաշբուրուն, Իզդիր, Կարս) - բալկոն (ԴԲ 151): 595 bedre, bedre (I) - դույլ (Էրզրում, Էրզինգան, Բուլանըխ, Մուշ, Ախաթ, Ալաշկերտ), bedro, տես vedro: (Արճեշ, Վան, Կելիխտ, գայլ, գետ Արդվին, Էրզրում) տես Vedro: 669 birička - մեկ ձիանի վրան ծածկած զսպանակավոր զբոսասայլ (Բուրսա, Կոնյա) - քրիչկա 692 bilemet, pelemot - զնդացիր (Թաշբուրուն, Իզդիր, Կարս) - պըլինոտ (ԴԲ 152): 644 beško - վառարան (Կափըջոյ, Տրապիզոն, Մոշկա) տես peč: DS 1596 duika - քառանիվ սայլի սոնիի մեջ պտտվող երկաթը (Բայբուրդ, Կարս, Սարիղամիշ) <ռուս. втулка> հայ. վտուկվա:

DS 4531 kaloč, kaluč, galuč` (I) նիզդե. kalic` (II) - մի տեսակ կոշիկ (Չորուն) - рyc. галош, կալոշ (ԴԲ, 151): fiot (II) - պտուտակ (Սարըղամիշ, Կարս, Սելիմ) - վինտ (ԺՀԼԲԲ, 4, 414) - վինդ (ԴԲ 153): 743 boška - տակառ (Սաղարաջըք, Կարս) - բոչկա բոշկա (ԴԲ151): DS 1840 fayka - կանացի բաճկոն (Իզդիր, Կարս) - ֆայկա (ընդհ.): 1225 Çotgu←чоткա խանութների հաշվիչ - չոտկ (ԴԲ, 152): 1303 Çulka, 1307 Çulki, Çülka-բամբակյա գուլպա (Տրապիզոն, Արդվին)-չուլկի: 1921 garavat - մահճակալ, ուսերեն՝ кроватъ (Շավշատ, Կարս, Արդվին) - կրավատ, կարավատ (ՀԼԲԲ, 9, 190) կառաֆաթ (ԴԲ, 151): 1991 gonfert - կոնֆետ (Կարս, Արդվին) - (ԺՀԼԲԲ, 3, 183) - կանֆետտ (ԴԲ 151):

2094 gogorož, տես kukurus, եգիպտացորենի գլուխ բոնած վիճակը, տես kukurus 1934 gaška - մեկ ծիով երկանիվ սայլ, տես kaška: DS 1959 gazarma- մեծ քարե շենք (Բայբուրդ, Սարըղամիշ, Կարս), **kazarma-** զորանոց հայ., կազարմա (ՀԼԲԲ, 9, 6): 2007 gerzinge - կարգինկա, քոքո, զամբյուղ (Մերսին, Իչեյ) - Կառզինգա (ԴԲ 151): 2386 hinduška - հնդկահավ, հնդուշկա (Իզդիր, Կարս) - հընդուշկա (ԴԲ 152): 2544 intires - հարաբերություն, կապ (Բայբուրդ, Սարըղամիշ, Կարս, Իրիշլի) - Senin mennen ne intiresun var - ինտերես: 2561 istol (I) - սեղան .... 2 աթոռ (Արտամուշ, Արդվին, Կարս Էրզինգան) - ըստու (ԴԲ 151): 2252 hahol - կոպիտ, անտաշ, հասարակ - խախտլ (ռուս.): 2560 istal - սեղան (Erzincan) - 4044 ustul, տես istol:

Istikan - բաժակ – ըստարան  
(ԴԲ):

2495 **isğar** – Կարաչայ .....:

2562 **isğaf** – պահարան  
(Շավշատ, Արդվին), **isğar**  
(Իզդիր, Կարս) – ըշկապ  
(ԴԲ151): DS 2548 iremen-  
կապ < ремень, րեմեն (ըմդհ.)  
DS 4525 istikan- 1. ջրի  
բաժակ (իմա՝ երզնկա)  
(Էրզրմեան), 2. istiken- թեյի  
բաժակ, ֆիմեան,  
(Փըմարբաշը, Կայսերի) <  
стакан, ըստական, ստական  
(ԴԲ):

2563 **isğaf**, **isğar** –  
(Արտանուշ, Բայբուրդ,  
Սարըկամիշ) – ըշկապ (ԴԲ,  
151):

**ispişka** – լուցկի DS 3613  
(şka) Իզդիր, Կայարբուրդ -  
իպիշկա (ԴԲ 151):

2549 **irezin** – ռեզին -  
գուլպայի ռեզին (Իզդիր և  
գյուղերը, Կարս) = ըռեզին,  
իլռեզին (ԴԲ):

**fürgen**, տես Vurgun:

2587 **kaçka** - երկանիվ սայլ  
(երկանիվ եզի և ձիու սայլ) –  
(Գյունուշիանե, Արդահան,

Կարս) – կաչկա, ծիասայլ,  
Մուշ (ՂԼԲԲ, Գ, 41):

3003 **kunut** - փոքրիկ մտրակ  
(Բայբուրդ, Սարըկամիշ,  
Կարս) – կնուտ (ՂԼԲԲ, Գ, 41)  
մտրակ (ԴԲ, 186 կըմութ):

2993 **kukuruz** - եգիպտա-  
ցորեն՝ եգիպտացորենի  
հատիկ (Մուղլա) - կուկուրուզ  
(ԴԲ):

3085 **lom** (III) – 1. երկաթյա  
ցից, 2. քարի կամ պատի վրա  
անցք բացելու ծայրը սուր  
ծող, 3. քար ջարդելու  
երկաթյա մուրճ, 4. ձիու սայլի  
առջևի և ետևի երկաթյա  
կապող կտորը, 5. ծանր  
բաները տեղից խախտելու,  
վերցնելու ծող, = լոմ (ՃՂԼԲԲ,  
2, 424):

3065 **lapatga**, **lapatka** - ամուր  
թիթեղից թի, քերիչ (Իզդիր,  
Կարս, Մուշ) < лопатка,  
լապատկա (ԴԲ):

4587 **maşin** – **maşna** –  
մեքենա (ամեն տեսակի)  
Յավուզ, Շավշատ, Արտանուշ  
- մաշին (ըմդհ.):

4593 **meşik**, **məşök** – պարկ  
(Կարս և գյուղերը) – մեշկո  
(ըմդհ.):

4644 **peşgu** - վառարան  
«шока» – (օրդու, բողաղըը,  
կիրշենեթ) - տես **peç**:

3173, 4599 **meşik**(II), **məşök**,  
**meşuk** - պարկ (Էրզրում,  
Կարս և գյուղերը) – մեշկո-  
լապի:

4641 **peç**, **peç**, **peçka** –  
վառարան (Բուլանըիս) - փեչ,  
փեճ (ըմդհ.):

DS 4476 **Çaynik** < чайник.

DS 1098 **Çaynih**, **Çaymik**.

**Çaynik** թեյնիկ (Իզդիր, Կարս,  
Սվազ, Արդվին, Մալաթիա,  
Տրաբիզոն, Մերզիֆոն,  
Գյունուշիանե), (ԴԲ 152  
ըմդհ.)

3419 **peçet** (I) – կնիք  
(Բայբուրդ, Սարըկամիշ,  
Կարս, Իրիշլի) - պեչատ,  
փեչատ (ԴԲ 153):

4647 **pişga** – լուցկի, ռուսկա  
– իշպիշկա (Իզդիր, Կարս) =  
տես **ispişka**:

3439 **piç** - փուռ (Կարաչայ,  
Թոքատ) - տես **peç**:

3522, 4665 **salam** - դարձան  
(Չիլեհանե, Ռեշատիե,  
Թոքատ) – салом – սալոմ  
(ըմդհ.):

4668 **samavar** – սամավար  
(Չիլեհանե, Ռեշատիե,  
Թոքատ) – սըմավոր (ԴԲ 153):  
**şipişka** (Իզդիր, Կարս,  
Բայբուրդ)

3530 **samahor** – սամավար  
(Իզնիկ, Բուրսա) - տես  
Samavar:

3507, 3540 **sapık**, **sapuk** (II)  
**sapıryh**, **sabuk**(II) – կարճ  
երկարաճիտ, սապոզ  
(Դուզջե, Տրաբիզոն  
Բայբուրդ, Սարըկամիշ) -  
սապոզ (ըմդհ.):

4682, 3608 **semişga**  
- արևածաղկի սերմ (Ռիզայե,  
Իզդիր, Կարս) – սեմիչկա,  
սեմուշկա (ԴԲ 153):

3665 **sorguç**, 4702 **sonkuç** -  
եղևնիներից ծորող կաշուն  
հյուբ, 4703 **sorguç** (II)  
եղևնու, կեղրի ծառերի խեժը  
(Էրմենեկ, Քոնյա) - սուրգուչ  
(ըմդհ.):

DS 4650 **pisoh-** քյուրեղ,  
շաքար,շաքարավազ (Իզդիր,  
Կարս) < песок – (ԴԲ 152):

4662 **saldat** - զինվոր (4666 )  
սալդաթ (ԴԲ 152):

TPC, 804, **şapka** - գլխարկ,  
DS 3733 **şafka**, **şahba** –

Ոհգայե, Չայելի, Կափտան  
փաշա ... – շափղա (ընդի):

4724 šina - անիվի օղակը  
(Նիզդե, Չորում, Իսպարտա) -  
շին

3779 šina demiri

շինել - զինվորական  
վերարկու (ԺՅԼԲԲ, 4, 73) –  
շընել, շինել (ԴԲ 152):

3792 šoş – մայրուղի (Կարս)  
– շոշ (ընդի.), (ՅԼԲԲ, Գ, 270):

4044 ustul, տես istol:

4094, 4803 vedire, vedre -  
դույլ (Իզդիլ, Արտահող,  
Արդվին, Չավչուտ, Կարս,  
Ոհգայե, Շիմշիրլի) - վեդրո  
(ընդի):

4197 yaşik (I) – մրգի արկը  
(Ոհգայե, Արդվին, Չավչարլը)  
- յաշիկ (ԴԲ 152), (ՅԼԲԲ, Գ, 107):

4347, 4829 zanga, zanka –  
սանկա, ձիաքարշ (Կարս,  
Արտամուշ, Արդահան) -  
սանկա (ԴԲ 153):

4830 zavot – պանիր  
սարքելու, ազնվացող անա-  
սուն բուծելու տեղ - զավոդ  
(ԴԲ):

4108 vurgun (II) (vurgun  
arabası) – Մեծ, երկու կամ  
ավելի ձի լծած սայլ  
(Մերզիֆոն, Ամասիա, Մալա-  
թիա, Տրապիզոն, Չորում,  
Կաստամունու և այլն) -  
Ֆուրզոն, Ֆուրզոն (ԺՅԼԲԲ, 4,  
828, ԴԲ):

3733 şabaş, şaba, säbe –  
Չարսանիքում դիտլչիի  
հավաքած փողը հարսանքից  
հետո՝ (Վան, Արճեշ, Բիթլիս) -  
շաբաշ՝ 1. բանթոլ,  
աշխատանքի դադար 2.  
նվազողների տրվող դրամ  
հարսանքեքներին (ԺՅԼԲԲ, 4,  
55), (ՅԼԲԲ, Գ, 180):

Թուրքերենը ձգտել է չենթարկվել հայերենի  
ազդեցությանը: Սակայն նման տալավորությունը սոսկ առերևույթ է  
ու խարուսիկ: Որքան էլ թուրքերենը խուսափել է հայերենից  
տերմիներն փոխ առնելուց և փոխառության կարիքի դեպքում  
պոպզին հերթին դիմել է արաբերենին ու ֆարսերենին  
(պարսկերենին), այնուամենայնիվ նրան չի հաջողվել զերծ մնալ  
հայերենի ազդեցությունից և այսօր նրա զրական լեզվում և  
բարբառներում 1500-ից ավելի հայերեն բառեր կան, զգալի մասը  
անփոխարինելի է այլ համարժեքներով:

Բնակլիմայական նոր պայմանները, քոչվորությունից  
նստակեցության անցնելու նոր կենսաձևը, ինչպես նաև  
տնտեսական նոր հարաբերություններն աստիճանաբար  
օսմաներենի և ապա թուրքերենի բառապաշարում հանգեցրին նոր  
հասկացությունների և տերմինների ի հայտ գալուն: Իհարկե այդ  
նույն ընթացքն էլ տեղի էր ունենում հայերենում, քանի որ նոր  
տիրապետողների պարտադրած վարչատնտեսական կացութաձևը  
նոր տերմինների և հասկացությունների համար ստեղծել էր նոր  
բառերի փոխառության պայանաններ: Այնուամենայնիվ, թե՛  
թուրքերենի, թե՛ հայերենի համար երկուստեք կատարվող  
փոխառությունները **երկու մակարդակով էին տեղի ունենում**  
**ժողովրդախոսակցական և զրական-գրքային:** Վերջին հաշվով,  
զրական լեզուներ թափանցած բառերի ակունքը ժողովրդական-  
խոսակցական լեզուն է, այսինքն՝ կենդանի մերձեցումների,  
չուկայական հարաբերությունների միջոցը, որն ազատ է  
հսկողությունից և, բնականաբար, ենթակա է հախտուն  
ներզործության: Մինչդեռ զրական լեզուները զուսպ են հախտուն  
ներթափանցումների հանդեպ. ժողովրդախոսակցական լեզուների  
բառապաշարից հազվադեպ են դիմում փոխառությունների: Այս

իսկ պատճառով էլ որևէ լեզվի ազդեցության չափը մեկ այլ լեզվի վրա ճիշտ գնահատելու համար սխալ է հիմք ընդունել միայն գրական-գրքային փոխառությունները: Գրական լեզու թափանցած բառապաշարը միայն սառցալեռան վերջոյա մասն է, մինչդեռ աներևոյթ ստորջրյա մասում է մնում հիմնական բառապաշարը, այսինքն՝ տերիտորիալ (տարածքային) խոսակցական լեզուներին՝ բարբառներից անցած բառերի քանակը: Այս է հիմնական պատճառը, որ թուրքերենի բառարաններում նշվող հայերեն փոխառությունների քանակը իրականից տասնապատիկ անգամ քիչ է:

3. Աճառյանը դեռևս 1902թ. ուսումնասիրություն է հրատարակել «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. «Թուրքերենէ փոխառյալ բառերը հայերենի մեջ» վերնագրով, ուր խոսում է հայերենի մեջ ներթափանցած 4000 թուրքերեն բառերի մասին, որոնցից գործածական է համարում 170-ը, իսկ գրականին անցածների թիվը կարծում է, որ 20-ից էլ ցի անցնում (էԱՄ, հ. 9, 225-295): Սակայն հակառակ ուղղությամբ ամբողջական ուսումնասիրության որևէ փորձ չի արվել: 3. Աճառյանի «Հայերեն արձատական բառարանում» ի մի են բերվել հիշյալ՝ միայն մամուլում հրատարակված հայերեն բառերը, որոնք գործ են ածվում թուրքերենի այս կամ այն բարբառներում:

Մի կողմ թողնելով վիճահարույց բառերի հարցը՝ մենք կանդրադառնանք անվիճելիորեն հայերենից թուրքերենին անցած բառերի քանությանը, որոնք ոչ թե գրքային կամ գրական փոխառություններ են, այլ դրացիական հարաբերությունների ժամանակ հայերից տեղական թուրքերին անցած անենաանհրաժեշտ կենցաղային, առտնին իրերի, բույսերի, տան կահավորմանը վերաբերվող իրերի, գործիքների անուններ են,

որոնց **հոմանիշները** շատ դեպքերում բացակայում են թուրքերենի լատուպաշարում: Այս առավելության շնորհիվ էլ նրանք կայուն տեղ են գրավել ոչ գրական թուրքերենի խոսակցական տարածքային բարբառներում: Մինչև այժմ ավելի շատ ուշադրություն է դարձվել գրական լեզվին անցած փոխառությունների վրա, իսկ բարբառներին անցած փոխառությունները մնացել են տեսադաշտից դուրս:

Այստեղ կարող է օրինական մի հարց բարձրանալ, ինչպե՞ս պատահեց, որ թուրքերենը դիմեց հայերենի օգնությանն այնպիսի մի ժամանակ, երբ հայերը կամ արդեն չկային կամ այնքան էին նվազել Թուրքիայում, որ տեսակարար կշիռ չունեին: Մինչդեռ թուրքերենի բառարաններում հայկաբանությունները գնալով շատանում են:

1930-ական թվականներին սկսվեց «հարազատ թուրքերենի» (մաքուր թուրքերենի) ջատագովների շարժումը, որոնք փորձում էին թուրքերենից դուրս չպրտել ոչ թուրքերեն՝ արաբերեն և պարսկերեն (ֆարսի) բառերը փոխարենը ժողովրդական-խոսակցական լեզվից վերցնելով «թուրքերեն» բառեր, որոնք էլ, վերջին հաշվով, մեծ մասամբ, հայերեն ծագում ունեցող բառեր դուրս եկան: Այս հայերեն բառերն արդեն բազմաթիվ հարյուրամյակներ դարձել էին թուրքերենի ժողովրդական բարբառների անքակտելի մասը, որտեղից էլ սկսեցին ներմուծվել գրական ու գեղարվեստական գրականության մեջ: Ուրեմն, նոր հայկաբանությունները «նորաբանություններ» չեն թուրքերենի համար, այլ անհրաժեշտությունից խոսակցական լեզվից գրականի մեջ կյանքի կոչված բառեր:

Ներկա աշխատանքի նպատակը միայն հայերենից թուրքերենին անցած փոխառությունների քանակական կողմը քննելը չէ, այլև պարզել ընդհանուր լեզվաբանական մի շարք հարցեր, որոնց պատասխանը լեզվաբաններին միշտ էլ հուզել է, և կամ այդ հարցերը մնացել են անպատասխան ու հանելուկային: Ահա այսպիսի հանելուկային հարցերից մեկն էլ **ծածկալեզվի՝ արգոյի** կամ պայմանական լեզվի առաջանալն է յուրաքանչյուր լեզվի մեջ: Ի՞նչ ակունքներից է սնվում արգոն, ինչպե՞ս է այն զոյանում և ո՞րն է նրա զոյատևման պայմանը: Մեզ թվում է՝ թուրքերենի՝ հայերենից կատարած փոխառությունների միջոցով հնարավոր է պարզել արգոյի՝ ծածկալեզվի, առաջացման ուղիներից մեկը և թերևս՝ ամենազվխավորը: Ահա թե ինչպես: Թուրքերենի բառարաններում բազմաթիվ հայերեն փոխառությունների դիմաց դրված է *argo /ծածկալեզու/* կամ «պայմանական լեզու» ծանոթագրությունը, իսկ երբեմն էլ թուրքերեն *mecaz* «փոխաբերություն» նշումը, սակայն, առանց հղելու դրանց հայերեն ծագումը: Պարզվում է, որ դրանց մի մասը ծագումով հայերեն բառեր են: .

Այսպես, օրինակ, «Թուրքերեն-ռուսերեն» բառարանը /1977/ (Քասկակով և գործընկերներ) նշում է *oski* «լիդա» (թուրքական դրամի միավոր) բառի դիմաց *argo*, որը հայերեն **ոսկի** բառն է, որ արևմտահայերենի բարբառներում ունի **օսկի** հնչյունը (այն գործ է ածվում «լիդա, դրամ» նշանակությամբ), որտեղից էլ անցել է թուրքերենի խոսակցական լեզվին, ապա՝ գրականին: Հայերեն **ավանակ՝** «էշ, հիմար» բառը թուրքերենում գործ է ածվում նույն՝ *avanak* ձևով և ունի «հեշտությամբ համոզվող և

խաբվող մեկը, հիմար» նշանակությունները: Նրանցից կազմվել են նոր ձևեր՝ *avanaklık* (հիմարություն, դյուրահավատություն), *avanakca* (հիմարաբար, ապուշավարի), որոնց դիմաց բառարանները ոչ մի դեպքում փոխառության ակունք չեն նշում, թեև գործածվում են դրանց որպես ծածկալեզու:

Թուրքերենի բարբառներում և գրական լեզվում գործ է ածվում *angut* կամ *angit*՝ «հիմար, ապուշ» բառը, որը փոխառյալ է հայերենից և նշվում է որպես *argo*: Անշուշտ, թուրքերենում նրա միատական **ան** ածանցը չի գիտակցվում, բնական է, որ չի գիտակցվում նաև նրա արմատը **գե՞տ-ն** է, **թե՞ կուտ-ը** <անկուտ, **թե անգետ** ձևից, թերևս կա նաև բաղարկության պահը:

Հայերենի բազմաթիվ բարբառներում **օսկոր** «ոսկր» բառը ունի նաև «կաշառք» նշանակությունը, որն այս նշանակությամբ էլ անցել է թուրքերենի բարբառներին: *Derleme sözlümüş* բարբառային բառարանը տալիս է *oskor* (և *oskur*) բառի «կաշառք» բացատրությունը:

Հայերենի բազմաթիվ բարբառներում, ինչպես օրինակ, Վանի, Ակնի, Պոլսի, Ադանայի և այլն, **երմակ-ճուր** նշանակում է «օղի»: Նույնությամբ այս արտահայտությունը, որ հայերենի ծածկալեզվից է փոխառված, գտնում ենք թուրքերենում *carmak*, *carmakçur* (ճարմակչուր) ձևով, որը որպես *argo* տրված է նաև Բասակովի և գործընկերների բառարանում: Թուրքերենին հատուկ ծայնավորների ներդաշնակության օրենքով (*sinharmonia*) հայերենի **ճերմակ** բառը ետադարձ առնմանությամբ վեր է ածվել **ճարմակ-ի**, ուր **ե** ծայնավորը **ա-ի** ազդեցությամբ դարձել է **ա**: Երբեմն օգտագործվում է միայն *carmak-ը՝* *carmakçur-ի* փոխարեն:

Հայերենի **մորուք** բառը թուրքերենում դարձել է ծածկալեզվի բառ *moruk* ձևով, սակայն ձեռք է բերել «զատամած,

ծեր, քուփակ, մեկ ոտքը գերեզմանում» նշանակությունները. գործ է ածվում նաև բայական ձևով moruklamak, moruklaşmak՝ «զառամել, խարխվել, քայքայվել» նշանակություններով: Այս բառն էլ բառարանները նշում են argo-ի տակ:

Հայերեն **երթալ** բայի հոգնակի առաջին դեմքը՝ **երթանք**, թուրքերենում դարձել է ertak՝ «դե, գնանք, շարժվենք, հայդա» նշանակությամբ և որպես ծածկալեզվի բառ նշանակում են թուրքերենի բառարանները: Հայերեն **մատ** բառից բարբառներում ունենք **մատիկ ընել** կամ **մատ ընել**, **մատ խառնել**, **մեջը մատ ունենալ**, **մի մատ մեղր անել** և այլ արտահայտություններ, որոնք էլ փոխանցվել են թուրքերենից madik՝ «խարդավանք, մեքենայություն, նենգություն, բանասարկություն, դավ, խորամանկություն» նշանակություններով և հետևյալ դարձվածքներով՝ madik atmak, madik oynamak, madik etmek՝ «խարդականել, նենգել, մեքենայություններ անել», madik yutmak՝ ծուղակը, թակարդն ընկնել, խաբվել, կա նաև madikci՝ «խարդախ» բառը, որոնք բոլորն էլ գործ են ածվում որպես ծածկալեզու: Եվ այսպես կարելի է բերել և մի քանի նման օրինակներ, որոնք տեղ են գտել հատուկ ծածկալեզվի թուրքերեն բառարաններում. մոտավորապես դրանք 76 հատ են:

Քանի որ հայերենից վերցված մի շարք բառեր թուրքերենում ենթարկվում են բաղարկության և ընկալվում են որպես «թուրքերեն» բառեր, այստեղ կփորձենք քննել նման մի քանի բառեր: Հայերենի **տաղավար**՝ «իյուղ, վրան, մացառով, շինված խրճիթ» (ԴԱԲ, 4, 363-364) բառը թուրքերենում հնչում է dalavar, dalvar, այսինքն՝ ենթարկվում է կոնտամինացիայի որպես թուրքերենի dal՝ «ճյուղ» բառից և avar ածանցից կազմված մի ձև, որի բացատրությունը գրեթե բառացիորեն նույնն է հայերենի հետ՝

«վրան մացառով ծածկված այգու, բանջարանցի հյուղ, խրճիթ»:  
var ածանցը թուրքերենում առկա է բազմաթիվ բառերում, օր.  
bimbilvar՝ «սոխակավարի», mitvar՝ «հուսով, հուսալից» կամ  
canavar «զայլ, գիշատիչ, գազան» և այլն: Թեև այն պարսկերենից  
փոխառյալ ածանց է, սակայն գիտակցվում է թուրքերենում, և բառն  
ամբողջությամբ ենթադրվում է որպես թուրքերեն:

Նաև թուրքերեն otegin – նախորդ օր (DS 3293) բառը  
հայերեն **օթեկան**, **օթել** – նախորդ օրվանից բառն է, որը  
ենթարկվել է բաղարկության և ընկալվել է որպես թուրքերեն ցնո –  
օր, ote մասից կազմված սակայն անբացատրելի է մնում բառի  
առաջին ote – մասը:

Թուրք հեղինակներն իրենց ուսումնասիրություններում  
նշում են բազմաթիվ հայկական պարերի փոխանցումը, իրենց  
անուններով հանդերձ, որոնց մի մասի անվանումը նույնպես  
ենթադրվում է որպես «թուրքերեն» արմատից կազմված ձև:  
Հայկական **հոյ նարը**, ենթարկվելով բաղարկության, դարձել է  
Oynar, այսինքն՝ գիտակցվում է որպես թուրքերենի oynamak՝  
«խաղալ, պարել» բառից կազմված oynar՝ «շարժում, շարժվող» մի  
ձև:

Հայերենի **ժամկոչ** բառը դարձել է zangoc, ուր **ժամ** բառը  
փոխարինվել է զանգ-ով, որը ժանոթ է թուրքերին zeng՝ «զանգ»,  
zengese, zengei՝ «զանգուլակ, զանգակիկ» պարսկերեն ձևերից:  
Zangoc-ը արդեն ոչ թե «ժամ հրավիրող, եկեղեցի կանչող», այլ  
«ժամհար, եկեղեցու զանգ հնչեցնող» իմաստով է գիտակցվում:  
Ավելի ծիծաղելի, անհեթեթ բաղարկության է ենթարկվել այս բառը  
Գազիանթեպի բարբառում, ուր այն հնչում է camgöz և

ստուգարանվում է որպես թուրքերեն բառ «աջք» բառից «ապակյա աջքով» (cam «ապակի» և göz բառերից կազմված):

Շատ հետաքրքիր է «մաքուր թուրքերենի» ջատագովների բռնած դիրքը, երբ հարկադրված իրենց բարբառներից բառեր են փոխ առնում: Սովորաբար նման բառերի ծագումը նրանք չեն նշում բառարաններում: Մինչդեռ դրանք ստուգարանվում են միայն հայերենով: Այսպես, օրինակ, թուրքերենի բարբառներում (Կարս, Էրզրում, Օլթի, Բայբուրդ, Սարիկամիշ) ցւցւտ նշանակում է «զօնօծ», իսկ նույն Էրզրումում և Օլթիում ցւցւտ նաև՝ «միջուկը դժվար ելնող ընկույզ»: Բլուր-Փուլուրի բարբառում այս բառը հնչում է kirkit, այլուր՝ girkit, ցւցւտ և նշանակում է «գործվածքը կամ գորգ գործելիս հանգույցը, կապը պնդացնող մի տեսակ սանր»: Նույն նշանակություններով այն առկա է հայրենի բարբառներում՝ **կարկուտ**<sup>1</sup>՝ Սասնո բարբառում **քարքիթ**<sup>2</sup>՝ «սանրածև երկաթ, որով փալաս գործելիս ծեծում են, թելերը նստեցնում», նաև **քարկիթ**<sup>3</sup>՝ «դժվար կթվող անասուն», այլ բարբառներում՝ **կրկիթ** ընկույզ՝ «միջուկը դժվար ելնող, պինդ ընկույզ»: «**Կրկիտ** բռնիր, որ ձեռքիցդ չընկնի»: այս ամուր, պինդ, կարծր, սեղմող նշանակություններից էլ առաջացել են «զօնօծ, կծօի, ժլատ» նշանակությունները: Կա և հայերենում **կրկել**<sup>4</sup>՝ «Կուչ գալ, սեղմվել, պնդանալ» նշանակությունները, որոնց արմատն է **կրկ**<sup>5</sup>՝ «պինդ, սեղմ, ամուր, կծկված»:

Սեկ այլ՝ **կուփ** արմատից թակը, թակիչը հայերենի բարբառներում կոչվում է նաև **կոփիչ**, **կուփիծ**, **կեփիծ**, **կիփիծ**, **կուփեծ**, գործ է ածվում «ուրազ, թակ», «լվացքի թակ», «տոփան», ինչպես նաև «գորգագործների սանրածև թակիչ» /կուփիծ/ նշանակություններով, որն անցել է նաև թուրքերենի բարբառներից köprüç «լվացքի թակիչ» ձևով:

Կասկած չեն կարող հարուցել նաև թուրքերենի ցօց, ցօց՝ «թունրի կող» բառի առնչությունը հայերեն **կող-ի** հետ, ինչպես նաև եթրոն՝ «հնացած, անպտք, նետվելիք, մողայից ելած» բառի կապը հայերենի **թափոն-ի** հետ և այլն: Սակայն «Türkçe Sözlük» հեղինակ Պասան Էրենը թափոն բառը համարում է ֆրանսերեն<sup>1</sup>:

Դնարավոր չէ բոլոր բառերը քննության ենթարկել, ուստի մենք կբավարարվենք ստորև միայն մորախայտ հայկաբանությունների ցուցակը տալով, որոնք քաղված են գերազանցապես թուրքերենի բարբառներից:

### ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ ԹՈՒՐԷՐԵՆ ՃԱԾԿԱԼԵԶԿՈՒՄ

Թուրքիայում և նրա սահմաններից դուրս, հրապարակվել են մի քանի ծածկալեզվի բառարաններ, ընդ որում, նրանցից մի քանիսը մի քանի անգամ: Օրինակ. Դեվելլիօղլու ֆերիտի Türk Argosu գիրքը 1990 թվականին արդեն յոթերորդ անգամն էր հրատարակվում, իսկ տասնհինգ տարի անց, բնականաբար այն ևս մի քանի հրատարակություն պիտի ունեցած լինի:

Մի քանի հրատարակություն է ունեցել նաև Գուլբի Աթթունջի Binyük Argo Sözlüğü (Ծածկալեզվի մեծ բառարան) գիրքը, 1990թ. Ստամբուլում:

Ծածկալեզվի բառարանները նշում են որպես Argo օգտագործվող բառերի ծագումը. սովորաբար մեծ թիվ են կազմում նրանց մեջ Թուրքիայում բնակվող այլ ժողովուրդների՝ գնչուների, հույների, հայերի, քրդերի, լազերի բառապաշարից եկող բառերը:

<sup>1</sup> Hasan Eren, Türkçe Sözlük, yeni baskı, 1988, Ankara, 2h. tğ 1416:

Հայերենից եկող բառերը «Ծածկալեզվի մեծ բառարանում» յոթ տասնյակից ավելի են, որոնցից մի մասի դիմաց հայերեն ծագումը չի նշված ստորև տալիս ենք մենք ոչ միայն «Argo-ի մեծ բառարանում», այլև այլ թուրքերենի բառարաններում հանդիպող ծածկալեզու դարձած հայերեն բառերի ցուցակը:

Ի թիվս թուրքերեն բառարանների, օգտվել ենք նաև Բասկակովի «Словарь турецко-русского языка» գրքից, ուր նույնպես նշված են որպես Argo գործածվող մի քանի հայերեն բառեր:

Ինչո՞վ կարելի է բացատրել ծածկալեզվի (Argo) մեծ մասսայականությունը թուրքերենում, դժվար է ասել: Արդյոք խարդախություններով զբաղվողների մեծ քանակի առկայությամբ, որոնք օգտագործում են թուրքերենի բառապաշարի բառերն ու դարձվածները նախապես իրենց միայն հասկանալի, իրենց պայմանավորված նշանակությամբ, որոնք հասկանալի չեն բնակչության լայն զանգվածներին:

Որոշ ժամանակ անց իհարկե ծածկալեզվի բառերն աստիճանաբար նոր պայմանական նշանակությամբ ընկալվում են նաև մյուս խավերի կողմից:

Ստորև տալիս ենք շուրջ 70 հայերեն բառերի ցանկը, որ դարձել են ժողովրդա-խոսակցական բառապաշարի և զրական լեզվի մեջ ծածկալեզվի բառեր

1. ahçik, ahçik (հայ աղիջ, աղջիկ) BAS 32 (ՀԱԲ, 1, 129-130 աղիջ, աղջիկ):

Կարսում hahciyh, hahcsh, hahcck օգտագործվում է **հայ** կամ **ոուս աղջիկ** նշանակությամբ: Գյումուշհանեում՝ ahciyh արտասանությունն ունի (DS, 22, 52):

2. ahbar, eğbayr, ahberik, eğbayr (BAS, 32)

Argo (DS, 11) abarik, ahbar, abar և այլն: ALT, 139, հայ, նրբայր, ՀԱԲ, 2, 15-16: Երբեմն այս բառով հասկանում են անձի հայ լինելը: Ծագում է հ.-ե. **bhrātēr**-ից:

3. agos (etmek) DS, 159 - **ակոս բացել**, հերկել agos, hagos, hakos, akoz (DS, 77, 159): Այստեղ բաղադրություն է կատարվել: Որոշ լեզվաբաններ սխալվում են akoz etmek համարելով հայերեն: akozա հունարեն բառ է «լուր տալ, խոսել» է նշանակում, որից էլ akoz etmek – մատնել, հայտնել արտահայտությունն ունի, որը կապ չունի հայերեն **ակոս**-ի հետ:

4. avanak – իշու ծագ (Argo, 48) անխելք, ապուշ, տգետ, հիմար, բութ, /BAS, 43/ - յովանակ, յաւանակ, ՀԱԲ, 3, 390-391:

Անցել է նաև գրական թուրքերենին, TPC 77

Avanak-avanak ne bakı yorsun (BAS 43):

avanak – дурень, простоефиля, простоек, простоеп

avanakça-հիմարավարի, ապուշավարի

avanaklık – հիմարություն

avanaklık etmek – հիմարություն անել

5. andır //I (DS 258) -անտր, ՀԱԲ, 4.401-403, **տեր**-ից՝ **ան** նախածանցով ALT 141, «Verdiği mangıra bak, Soktuğu andıra bak»:

(Argo) ծածկալեզվում օգտագործվում է «Տղամարդու կամ կանացի սեռական անդամ» նշանակությամբ (BAS, 40, գրում է «արական անդամ» (penis):

6. angut - **ան+** կուտ- կուտ չունեցող, անխելք, ինչ-որ մի բաղի տրվող, անունից, ՀԱԲ, 2, 664, ԳԲ 102: Ա.Ն. Բասկակովի «Թուրքերեն-ռուսերեն բառարանում» և նշված է angut-ը, որպես ծածկալեզվում օգտագործվող բառ՝ angut տարբերակով (ayrak, uşum) տես TPC, 55 – 1. orap, Argo 2. հիմար, ապուշ, նաև angut

տարբերակով *ayrak*, սսսոտ նշանակությամբ DS, 267, 2187, 2211, 2051:

BAS-ում չի նշվում հայերենից լինելը (եջ 40), տալիս է նաև *angut* տարբերակը:

7. *akob* – Չակոբ (DS, 159) - հիմար, խենթ նաև *ako* (DS, 159)

Որևէ ազգի բացասական բնութագիրը նաճախ է տրվում նրա հատուկ անուններից մեկով, Ակոր, Կարապետ, ինչպես օրինակ, ռուս. Իվան:

8. *asvas* - աստուած, (ՉԱԲ 1, 279-282) /BA, 167, BAS 45/ -:

*međa asvas yardımcun gıllas* (մեղա աստված, օգնականս կլինես): *međa<մեղա բարը չհասկանալով>* քարգմանել են *Koca tanrı* – Մեծ աստուած:

9. *antini kukaz* (արական անդամ, առնանդամ, penis)

(Այն կողմից ես գալիս BAS 41) "... Antinikukazı: Kemal Ergüç'e göstererek Al Al demez mi..."

10. *antin* -անդին, այն կողմ (օգտակար, կին) - պոռնիկ, անպատկառ, բոզ (BAS 41, պրս. *Döh* բառից, ՉԱԲ, 1, 646-647, ԳԲ, 96) Ստամբուլում օգտագործվում է օպիում նշանակությամբ, (Argo 39):

11. *antinlemek* - գողանալ, փախցնել (հայ. **անդին** + **թ. lemek**) (BAS, 41):

12. *Anut/ anot*, տնս hanut, hanot – խանութ

